№ 88 ՇԱԲԱԹ, 23 ԱՊՐԻԼԻ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 1916 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍԵՑՈՑ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . 10 ռուբ.
Կէս տարին . . . 6 ռուբ.
Ամսական . . . 1 ռուբ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . 12 ռուբ.
Կէս տարին . . . 7 ռուբ.

Բաժանորդագրութիւնը ընդունւում է իւրաքանչիւր ամսի սկզբից, և պիտի վերջանայ անպատճառ յետագայ որևէ ամսի վերջին։
Մայիսի մեկից մինչեւ տարւոյ վերջը արժէ 8 ռուբլի։
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐ. և ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹ. ՉԷ ԸՆԴՈՒՆՈՒՄ
Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 20 ԿՈՊԷԿ (կարելի է և դրոշմաներով) և հին հասցէն, առանց որի դիմումները կը մնան ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

ՀՈՐԻԶՈՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՇԱԲԱԹ, 23 ԱՊՐԻԼԻ № 88

ԱՌԱՆՁԻՆ №-Ը ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ.—1-ին երեսի վրայ տողին (պետիտ) 10 կոպ., հայտարարութիւնը գուրս՝ 20 կոպ., 4-րդ երես 5 կոպ., Հայտարարութիւնը դուրս՝ 10 կոպ.։
ԱՊԱՌԻԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՉԷՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ
Խմբագրութիւնը բաց է 9—3 ժամ., գրասենեակը 9—2 ժ. ցերեկ. և 6—8 ժ. երեկ.։
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԽՄԲԱԳՐԻ ՄՕՏ՝ ժ. 2-ից մինչև 3-ը։

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція Газеты „Оризонъ". Сололакская ул., № 6, кв. 1, Телеф. № 15—57.
կամ Tiflis (Russie, Caucase), Rédaction „Horizon"

ՕՐՒԱՅ ԿԱՐԵՒՈՐ ԱՆՑՔԵՐԸ

Ռուսաց արևմտեան ճակատում տեղի են ունենում թնդանօթամարտներ և օդային հետախուզութիւններ։

Կովկասեան ճակատում յետ են մղած թիւրքերի գիշերային յարձակումները Բաբերդի և Երզնկայի ուղղութեամբ։

Վերդենի մօտ ֆրանսիացիները մի նոր մասնակի աջողութիւն են ունեցել։

Իրլանդական ապստամբութեան պարագլուխներից 3 հոգի հրացանազարկ են եղած, ուրիշ երեքը բանտարկուած են 3 տարի ժամանակով։

Մեր բաժանորդներից նրանք, որոնք 1916 թւի հաշւին վճարել են 4 ռուբլի, մայիսի մէկից այլեւս թերթ չեն ստանայ, եթէ չշտապեն ուղարկելու մնացած 6 ռուբլին։

«ՀՈՐԻԶՈՆ»-Ի ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՄԻ ԿՈՉ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՍ

Հայկական վերջին ողբերգութեան մանրամասները ամբողջացնելու և շուտով հրատարակել կարենալու համար, ես առանձնապէս խնդրում եմ հայրենակիցներից ինձ հաղորդել այն ամեն տեղեկութիւնները կամ ականատեսների վկայութիւնները, որոնք կարող են մի բան աւելացնել արդէն ծանօթ իրողութիւնների վրայ։

Այդպիսի մանրամասներ ինձանից խնդրել են Անգլիայի մեր ականաւոր բարեկամները և առանձնապէս ուզում են հետեւեալները.

Ա.—Էնկիւրիի կոտորածի անցքերը մանրամասնօրէն պատմուած կամ գրուած մի ականատեսի կողմից։ Հակառակ դէպքում՝ ես ուրախ կը լինէի ունենալ այդ մասին եղած գրութիւններ կամ զեկոյցներ։

Բ.—Զէյթունի մասին ունէ՞ք նոր տեղեկութիւն։

Գ.—Ուրֆայի կոտորածների մանրամասները։

Դ.—Կեսարիոյ։

Ե.—Ադանայի։

Զ.—Դիարբէքիրի։

Է.—Վերոյիշեալ վայրերի կոտորածների վերաբերմամբ հայ, ռուս, թուրք, վրաց և այլն մամուլի մէջ երեւցած ունէ՞ք նորութիւն կամ մանրամասներ։

Ը.—Վանի ինքնապաշտպանութեան կռւի ամփոփ և ամբողջական պատմութիւնը։

Թ.—Թիւրք կառավարութիւնը վերջերս հրատարակել է մի «Սպիտակ գիրք» իր պաշտօնական յայտարարութիւնները արդարացնելու մտքով։ Դրա ամփոփումը Բեռլինից հեռագրուել է ամերիկեան թերթերին։ Շատ ցանկալի է ունենալ այդ «Սպիտակ գրքի» մի օրինակը և կամ նրա թարգմանութիւնը։

Ժ.—Հայ խաղաղ ազգաբնակութեան անդահանութեան հրամայող թիւրք կառավարութեան պաշտօնական յայտարարութեան մի ամբողջական օրինակը։ Օր. Էլէնորա Էկան, մի ամերիկուհի, Ֆիլադելֆիայի «Saturday Evening Post»-ի մէջ հրատարակել է նրա մի քանի հատուածները։ Բայց շատ ցանկալի է ունենալ այդ յայտարարութեան իսկական օրինակը։

Ես երախտապարտ կը մնամ բոլոր նրանց, որոնք գրաւոր կամ բերանացի կարող են անմիջապէս հաղորդել ինձ նոր տեղեկութիւններ վերոյիշեալ հարցերի մասին։ Ի հարկէ, կարիք չըկայ շեշտել, այդպիսի մի գործի էական նշանակութիւնը։

Իմ հասցէս՝ Թիֆլիս, Լերմոնտովսկայա, 12, Ազգային Բիւրօ։

Գործի յաջողութեան համար ես խնդրում եմ միւս թերթերին արտատպել այդ հարցերը, եթէ հնարաւոր է, և հաւաքել բաւարար տեղեկութիւններ։

Արշակ Սաֆրաստեան

ՀՐԱՇՔՈՎ ԱԶԱՏՒԱԾ ԳԵՂԱՄ ԱՍԼԱՆԵԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ

(Մի էջ հայկական մարտիրոսագրութիւնից)

«Ես Հորմուզ գիւղից եմ, որը գտնւում է Բիթլիսից 3 ժամւայ հեռաւորութեան վրայ։ Մեր ընտանիքում 4 հոգի կար—հայրս՝ Խաչօ (Կանչօ), որ ուխ էր գիւղի հայկական մասի. մայրս՝ Անգին, ես և 5 տարեկան քոյրիկս՝ Սալի։

«Անցեալ տարւայ յուլիսի սկզբներին, երբ լուր հասաւ, որ ռուսաց զօրքերը յետ են քաշւում, մեր գիւղում ապրող քրդերը՝ ուխ Դաւրիշ աղայի, Փրշօ Դաւրիշի, Օղմիի, Ալիի և իրենց լաճուկների (աղաների) առաջնորդութեամբ հրամայեցին տղամարդոց հաւաքուել գիւղի որոշած տեղը։

Զինւած քրդերը շրջապատեցին մօտ 40 հոգի հայերի, կապեցին նրանց իրար հետ և տարան գետի ափը, ուրեղ և բոլորին հրացանազարկ արին։

Կանանց և երեխաներին (սրանց մէջ և ինձ)—երբ փաշայի հրամանով—նոյն օրը քշեցին դէպի Բիթլիս։

Քաղաքին չհասած՝ կամուրջի մօտ՝ կանգնեցրին մեզ բոլորիս և մահւան սպառնալիքով առաջարկեցին կանանց—մի-մի քիւրդ ընտրել։ Բոլորն էլ միաբերան յայտնեցին, որ բէտ ամեն ինչ խլել և իրենցից, բայց յօժարակամ չեն հրաժարւի իրենց Աստուծից։ Կատաղած քրդերը սկսեցին բոլորիս անխնայ կոտորել—մեծերին՝ հրացանով, երեխաներին գետը նետելով։

Այդ պահուն ես պինդ սղմւել էի մօրս. մեզ մօտ կանգնած էր և մօրաքոյր Մանուշակը։ Դեռ զարկեց մայրիկս, այնուհետեւ՝ Մանուշակը, որը ընկնելու ժամանակ վայր գցեց և ինձ, իր տակն առնելով։

Քրդերը՝ գործը վերջացնելուց յետոյ հեռացան։

Դիակի տակը մնացի մինչև մութը. յետոյ սարերով ճամբայ ընկայ դէպի մեր գիւղը և պահւեցի սարի գլխին 3 օր սոված։ Ճարս կտրած, իջայ գիւղը և յանձնեցի որբեւայրի Հաջոռ անունով մի քիւրդ կնոջ, որը պահեց ինձ մօտ 1 ամիս։

Մեր գիւղի քրդերը, իմանալով, որ ես կենդանի եմ մնացել, եկան մի երեկոյ Հաջոռի մօտ և յայտնեցին, որ վճռել են ինձ սպանել, որովհետեւ ես յետոյ, երբ մեծանամ, կարող եմ զանգաս սկսել իսկած ծնողների ու գոյքերի համար։ Հաջոռը չհամաձայնեց։

Այդ գիշերը՝ կուչ եկած մի մութ անկիւնում, անց կացրի ահ ու դողի մէջ...

Լուսադէմին ես թողնում փախայ դէպի Բիթլիս։ Այստեղ փողոցի թոյլասութեամբ պահւեցի մի քանի ամիս բողոքականների ժողովարանում, մինչև ռուս զօրքերի գալը։ Այստեղից ինձ կանանց և միւս երեխաների հետ ուղարկեցին Վան և տեղաւորեցին մեզ, մինչև Կովկաս ուղարկելը, մի ուսերակ տան մէջ։

Մի օր մեզ մօտ եկաւ մի հայ կամաւոր և սկսեց հարց ու փորձ անել Հորմուզ գիւղի զոհւածի մասին։ Մեր կանանցից մէկը նրան պատմեց, որ ամբողջ գիւղը ջնջւած է և որ ես եմ միայն պատահմամբ ողջ մնացել։

Բարի կամաւորը, փայփայելով ինձ և մի կողմ քաշելով, հարցրեց—ճշմարտէն եմ ես և որոնք էին իմ ազգականները։ Ամեն ինչ պատմեցի, աւելացնելով, որ Կովկասում՝ Անանեանների Աջամէթ կալւածքում՝ ունիմ հօրեղբայր Սարգիս անունով, որին չեմ ճանաչում (վաղուց է հեռացած երկրից) և որից շատոնց լուր չկար։ Կամաւորը, անկարող լինելով իրեն զսպել, գրկեց ինձ և ուրախութիւնից և կսկծից սկսեց լալ։

Անծանօթը իմ հօրեղբայր Սարգիսն էր... Այժմ ես գտնւում եմ Աջամէթում նրա տանը»։

***

Գրի առնելով 12 տարեկան Գեղամի անպաճոյճ պատմութիւնը, վերածելով այն Մշոյ բարբառից գրականի, դիմում եմ նրանց, որոնք անմիջական շփում ունին մեր տարագիր արիւնակիցների հետ, և խնդրում արձանագրել ականատեսների ցուցմունքները, քանի դեռ թարմ են զուլումի յուշերը և չեն ծածկւել մոռացութեան և աղաւաղումի մշուշով։ Այդօրինակ վաւերագրերը անգնահատելի նիւթեր են լինելու մեր ցեղի մարտիրոսագրութեան պատմութեան և նրա դատի հիմնաւորման համար։

Ա. Թադևոսեան

ԶԱՐԱԲԱՍՏԻԿ ՀԱՐՑԸ

II

Հրապարակ իջան և բուրժուաների որդիները, որոնք կազմում են հայ կրթւած մտաւորականութեան վերին ու ամենատաւար շերտը։ Սակայն այդ մտաւորականութիւնը կատարելապէս միջազգային է, զուրկ հասարակական բնազդներից, կհանքը վերլուծելու տրամադրութիւնից, ամփոփւած իր խաւական հաճոյքների շրջանակում։ Նա ոչ հայ է, ոչ ռուս, «այլ ծնունդ մի նոր ազգի» ու հոգեպէս յեղաթիւրւած։ Հայոց լեզուն նրանց համար արժէք չունի, նրանք կատարելապէս անծանօթ են հայ գրողների գրւածքներին, սակայն նրանք չեն մոռանում, տեղն ընկած ժամին, թմբուկ զարնել, թէ հայոց գրականութեան մէջ իրենց «նուրբ» ճաշակին վայել երկեր չկան։ Այսպէս են նոյնիսկ նրանց այն տարրերը, որոնք ձգտում են ազգի ղեկավարութիւնն իրենց ձեռն առնել, ազգի մէջ գիրք ու պատիւ են վայելում և ազգասէրի հռչակ ունին։

Սրանից մի քանի տարի առաջ մամուլի մէջ ինչ որ բարձրագոչ ձայներ լսեցին, ձայներ, որոնք պատգամում էին, թէ հայ ժողովրդի մտաւոր կեանքի ղեկն ընկել է սեմինարիստների ձեռքը, իսկ նրանք ոչ շատ յառաջադիմական մի մթնոլորտ են ստեղծում և նոյնիսկ հայոց լեզուն «տիրացուական» դարձնում։ Այդ վերանորոգչական կոչերը հրաւիրում էին հայոց «աշխարհիկ» մտաւորականներին՝ հրապարակ իջնել ու ազգի բախտի տնօրինութիւնը առնել «անարժան» ձեռքերից։ Այդ քարոզներն արձագանք գտան Ալէքսանդրապոլում, և մի տիպիկ բուրժուա, ոգևորւած, գործի դիմեց, դարձաւ խմբագիր, որ հենց Շիրակից, այդ խիտ հայաբնակ գաւառից, սկսի հայերին սեմինարիստներից ազատագրելու գործը։ Բայց նրա «Արևը» 13 համարից յետոյ խաւարեց, խմբագրի ոգևորութեան թափն էլ իջաւ։ Բնորոշ է այն, որ յարգելի խմբագիրը ոչ հայերէն խօսել գիտէր և ոչ գրել։

Հայ խոշոր բուրժուազիան ամենաումեղ դասակարգն է մեզնում։ Նրան են հետևում մանր առևտրականները, արհեստաւորները, ունևոր գիւղացիները... Մայրենի լեզւի ու գրականութեան նկատմամբ ունեցած նրա հայեացքը այսօր շատ ժողովրդականանում է հայութեան զանազան խաւերում, մանաւանդ օտար դպրոցներում կրթւած ինտելիգենցիայի մէջ։ Տարօրինակն այն է, որ այդ արատից ազատ չեն և հայոց դպրոցներն՝ իրենց ուսուցիչներով և մանաւանդ վարժուհիներով, հայ հրապարակախօսներն ու գրողները։ Ամենից շատ մեղանչում են նրանք, որոնք իրենց թւում ազգասէր են համարում, Խօսքս պահպանողական ու չափաւոր տարրերի մասին է։ Վերջերս այդ ապազգային երևոյթն սկսել է սիրամարգի փետուրներ հագնել. նա հանդէս է գալիս կոսմոպոլիտիզմի քղանցքով։ Ինչու անպատճառ պիտի հայերէն խօսել այդ շովինիզմ է, պատճառաբանում են հայ սեթևեթ պարոնները և մանաւանդ «ազգասէր» տիկինները, անձնաւորութիւններ, որոնք ոչ ազգային խնդիրներով են զբաղւում, ոչ պետական և ոչ էլ միջազգային։ Հենց փրազներով նրանք իրենց մեշչանական հոգին են ծածկում, ուրիշ ոչինչ։

Կան մի շարք ինտելիգենտ մարդիկ էլ, որոնք, ըստ երևոյթին զինւած են գաղափարականութեամբ, ունին կազմակերպւած աշխարհայեացք և պատկանում են ծայր ձախակողմեան հոսանքներին։ Սրանք էլ գիտութեան անունից են ճառում։ Մեր խորին համոզմունքով ոչ գիտութեան էութիւնից է այդ բղխում և ոչ էլ ընկերավարական ուսմունքից։ Մարքսիզմը երբեք էլ պատերազմ չի յայտարարել մայրենի լեզւի դէմ։ Աշխարհի բոլոր մարքսիստները սիրում են իրենց հարազատ ժողովրդի լեզուն և խօսում են այդ լեզւով։ Օրինակ կարող են ծառայել հենց մեր հարևան վրացիները, որոնց մտաւորականութեան մի ստուար մասը այդ ուսմունքի հետևող է, բայց ոչ միայն հայ մարքսիստները, այլ և ազգասէրները պիտի մայրենի լեզւով խօսելու դասեր առնեն նրանցից։ Մեզնում էլ կան այդպիսի յարգելի օրինակներ։ Բաւական է յիշել «Դարուն» ամսագրի հրատարակիչներին։ Դժբախտաբար այդպիսիների թիւը սահմանափակ է, այն ինչ աւելի բազմաթիւ են չակերտաւոր մարքսիստները, որոնք կուրծք են ծեծում այն սրբութիւնների համար, որոնց իրենք չեն ճանաչում, այլ միայն հաւատացեալի կոյր պատրաստակամութեամբ երկրպագութիւն են տալիս։ Ինչպիսի սրբութիւնների անունից էլ նրանք գռռան, դարձեալ մենք կասենք, որ նրանց մէջ խօսողը ոչ թէ ուսումնասիրութիւնից բղխած կուռ համոզմունքն է, այլ բուրժուազիայի ուժեղ ազդեցութիւնը, հայկական մեշչանականութեան հոգին, որ բուն է դրել նրանց մէջ՝ հակառակ իրենց կամքի։

Այսպիսով պաշտպանել հայ լեզուն ու գրականութիւնը, նշանակում է պաշտպանել հայ ժողովրդի, հայ դեմոկրատիայի թանկագին արժէքներից գլխաւորը։ Դրա համար հարկաւոր է մաքառել ամենից առաջ հայ բուրժուազիայի հասկացողութիւնների դէմ, որովհետև մայրենի լեզւի նկատմամբ եղած արհամարհանքն ու անտարբերութիւնը, ինչ շորերով էլ նա պճնւի, կոսմոպոլիտիզմի, թէ մարքսիզմի, գլխաւորապէս բուրժուա-մեշչանական է։ Հայ ժողովուրդն ունի և իր հոգուն հարազատ մտաւորականներ, որոնց թիւը օրէցօր ստւարանում է։ Նրանք խորապէս զգում են մայրենի լեզւի ու գրականութեան արժէքը, այն գրականութեան, որի գոհարներով այսօր նոյնիսկ օտարներն են հրճւում։ Անկասկած, յաղթանակը այս ժողովրդական տարրերինն է։

Ս. Թորոսեան

„ՀՈՐԻԶՈՆԻ" ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՑ

Կարս, 18 ապրիլի

Այսօր Հասան-Ղալայի Թոփթան գիւղից տեղս եկած մի գիւղացի պատմում է հետեւեալ դէպքը.

«Մի քանի օր առաջ ռուսական Բասենի Թոփթան հայ գիւղն են գալիս մի խումբ պարսիկ ջորապաններ իրենց ջորիներով և իջևանում այստեղ։ Երեք օր ապրելուց յետոյ, նրանք շարունակում են իրենց ճանապարհը։ Նրանց գնալուց յետոյ անմիջապէս գիւղացիք նկատում են, որ նոյն գիւղի ծայրում գտնւող Բաթօ Դէոբրգեանի տան երդիկից սովորական ծուխը չի բարձրանում. հարևանները հետաքրքրւելով այդ արտասովոր երևոյթով, ներս են մտնում նրա խրճիթը. և ի՜նչ—Բաթօն, տարը՝ Նանան և թոռը՝ Ենովք արեան մէջ թաթախւած պառկած են լինում իրենց անկողիններում։ Գիւղացիք կասկածում են պարսիկ հիւրերի վրայ. գիմում են իսկոյն շրջանի կոմենդան-

Թիֆլիս, 23 ապրիլի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԻԱՄԻՏ ՊՐՈՎՈԿԱՑԻԱ

Վրաց ազգայնականների օրգան „Закав. Рѣчь"-ը շատ անհանգստացած է. Նա գրում է, որ գալիք զեմստւօյական խորհրդակցութիւնը կարող է նկատել Անդրկովկասեան նահանգների և գաւառների անբնական բաժանումները և կարող է յարմարեցնել վարչական բաժանումները գիւղատնտեսական և ցեղագրական պայմաններին. Վրացի և թաթար նացիոնալիստների դրութիւնը այդ տեսակէտից բաւական խախուտ է. Նրանք չեն կարող ապացուցել, թէ մի Ախալքալաք կամ մի Լոռի տնտեսական նմանութիւն ունին վրացական գաւառների հետ, կամ Ղարաբաղի լեռնային տնտեսութիւնը նոյնն է, ինչ է Գանձակի, Նուխու և առհասարակ Քուռի տափաստանների գիւղատնտեսական կուլտուրան. Նրանք պիտի դիմեն զանազան միջոցների, որպէս զի յաւերժացնեն ներկայ արհեստական բաժանումները և ստեղծեն վրացական կամ թաթարական գերիշխանութիւն մի շարք հօծ հայաբնակ շրջանների վրայ.

Այդ նպատակով թուրք-վրացական „Закав. Рѣчь"-ը վրացի իշխան Տումանովի բերանով հաղորդում է Կովկասեան իշխանութեանը, թէ հայերը, ձգտելով փոխել գոյութիւն ունեցող վարչական բաժանումները, ոչ այլ ինչ են ուզում, եթէ ոչ զեմստւօյական ինքնավարութիւնը դարձնել հայկական աւտոնոմիա. Իշխանը յայտարարում է նաև, որ հայերը ուզում են լինել աւելի արտօնեալ վիճակում, քան նոյնիսկ ռուս ժողովուրդը. Իբր հայերը չեն ուզում աշխատակցել միւս ազգերի հետ. Իբր թէ հայերը այսօր հիմք են դնում այն աւտոնոմիայի, որի շէնքը աշխատել են կառուցել հարիւր տարուայ ընթացքում.

Ցաւակցութեան և ափսոսանքի ժպիտ միայն կարող է յարուցել այս պարզամիտ պրովոկացիան. Ո՞վ չգիտէ, որ ամենից առաջ և ամենից շատ վրաց ազգայնականներն են խօսել և աշխատել իրենց աւտոնոմիայի մասին. Հայերը այդ տեսակէտից շատ քիչ բան են արել. Եւ այսօր էլ, ջանալով պահպանել Թիֆլիսի և Գանձակի նահանգների մէջ հայկական գաւառները, վրացի և թուրք նացիոնալիստները տարւած են ոչ թէ «զեմստւօյական», «տնտեսական» հարցերով, այլ միայն և միմիայն իրենց արհեստական թւական առաւելութիւնը փրկելու մտահոգութեամբ.

Ում կարող էք մոլորեցնել. Կովկասեան ադմինիստրացիան այնքան էլ միամիտ չէ, որ իրերը փնտրի ոչ այնտեղ, որտեղ նրանք թաղնուած են. Ընդհակառակը, այդպիսի յօդուածները կարող են բոլորովին տարբեր, «Закавк. Рѣчь»-ի համար միանգամայն աննպաստ տպաւորութիւն թողնել.

Եւ կովկասեան ադմինիստրացիան, և հասարակութիւնը գիտեն, թէ ինչ է ուզում հայ ժողովուրդը. Նա պատրաստ է աշխատակցել միւս ազգութիւններին. Նա միայն մի բանի է ձգտում. չմընալ փոքրամասնութիւն այն շրջաններում զեմստւօյական հիմնարկութիւններում, որտեղ ինքը, իբրև զեմստւային տուրք վճարող, մեծամասնութիւն է կազմում. Ո՞ր արդարամիտ վրացին կամ թաթարը, որ անկողմնակալ է ... պահանջի իրաւացիութիւնը. Ոչ ոք չի կարող առարկութիւն անել մեր դէմ,—մանաւանդ այժմ, երբ ապացուցուած է, որ Գանձակի և Թիֆլիսի նահանգներում ցեղագրական դասաւորութիւնը միանգամայն համապատասխանում է բնական-տնտեսական դասաւորութեանը. Կարող էք բոլորովին մերժել ցեղագրական մոմենտը. ընդունեցէք զուտ տնտեսական գործօնի առաջնութիւնը. Դարձեալ ստիպուած կը լինէք խոստովանել, որ մեր գաւառական բաժանումները գրեթէ ոչ մի տեղ չեն ներկայացնում տնտեսական միաւորներ և անմտութիւն կը լինի հիմնել նրանց սահմաններում զեմստւօյական նոր միաւորներ.

Մենք չենք ասում, որ պիտի լինել աւելի արտօնեալ դրութեան մէջ, քան բուն Ռուսաստանը. Բայց մենք պնդում ենք, որ եթէ 1890 թւի կանոնադրութիւնը տարածէի մեր երկրի վրայ առանց էական փոփոխութիւնների, նա երևան կը հանի մեզնում շատ աւելի բացասական կողմեր, քան Ռուսաստանում. Մենք կարծում ենք, որ Անդրկովկասում, մանաւանդ հայ-թաթարական շրջաններում չի կարելի մտցնել ազնւականութեան, կամ նոյնիսկ կալւածատիրական յատուկ կուրիա, որ դա կը լինի ծիծաղելի կուլտուրական և անարդար՝ միջազգային տեսակէտից. Մենք ասել ենք, Գանձակի նահանգը, որ կազմւած է երկու միանգամայն տարբեր մասերից՝ լեռնային-հայկական և դաշտային-թաթարական, չի կարող ունենալ մէկ նահանգական զեմստւօ և գաւառական զեմստւօներ—հին սահմաններում. Եթէ զեմստւօն կապւի ներկայ բաժանումների հետ, կստեղծւի տնտեսական և ազգային-կուլտուրական պայմաններին հակասող մի դրութիւն.

Էլ ինչ «աւտոնոմիայի» խնդիր կայ այստեղ.

Պարզ խօսէք, և կը պարզւի ամեն ինչ. Կիմանանք, թէ որտեղ է թաղնուած աւտոնոմիայի տենչը. Եթէ զեմստւօն կարող է դառնալ աւտոնոմիա, ամենից շատ կօգտւէք դուք, կլանելով անագին հայկական շրջաններ, մի բան, որ ձեր մշտական երազն է եղել.

Պրովոկացիան անյաջող է, վիժած է արդէն.

տուն, որը հնարաւոր միջոցները ձեռք է առնում. Նրանցից 7 հոգու դաշոյնները արիւնոտ են լինում. Իսկոյն ձերբակալում են այդ եօթ հոգուն և ուղարկում Էրզրում. Պատժւում են նրանք իրենց այդ յանցանքի համար,—ոչ ոք չգիտէ.

Դիխսբալ

ՆԱՄԱԿ ՏՐԱՊԻԶՈՆԻՑ

Տրապիզոնցի նաւապետ Գրիգորը, որը վերադարձել էր հայրենիք, տես թէ ինչ է գրում ինձ իր 17 թւակիր նամակով.

«Տրապիզոնում եմ. Մերոնցից ոչ ոքի չգտայ. Իմ հարևան յոյները պատմեցին ինձ եղած գործերը. Գրել չեմ կարող. սուգ ու շիւան է ամեն կողմ.

Թուրք կառավարութիւնը յայտարարել է, որ հայերը պատրաստւեն մէկ շաբաթից տեղահան լինելու. 30 հոգի հաւաքել էին իբր թէ Սամսոն ուղարկելու, լցրել են նաւակի մէջ և դեռ Սամսոն չհասած, կողոպտելուց յետոյ, բոլորին էլ չարաչար սպանել են. Սրանց մէջ կար Վարդան անունով մէկը, որը վիրաւորւած լինելով դուրս է եկել գիշերը և մտնելով մի յոյնի տուն, պատմել է այս բոլորը. Նրան վերջը բռնել են և հիւանդանոց տանելով թունաւորել.

Ժողովուրդը նախ կարծել է, որ իսկապէս տեղահան պէտք է անեն. Բայց երբ իսկական մտադրութիւնն իմացել են, այն ժամանակ քաղաքի ամեն կողմ արդէն շրջապատւած է եղել, որպէսզի ոչ ոք չկարողանայ փախչել. Դրանից յետոյ մաս մաս սկսել են ժողովուրդը տեղահանութեան պատրւակի տակ տանել և ճանապարհին սուսերներով մի մասը գետը թափել, մի մասն էլ սպանել առանց խնայելու ոչ երեխաներին և ոչ էլ կանանց. միայն ջահիլ աղջկանց պահելով՝ քաղաքը ամայացրել են հայերից.

Մեր տնից ոչ մի մարդ չկայ. Իմ երեք աղջիկներիս տարել են, ծեր մօրս սպանել, կնոջս աքսորել են. մեծ աղջիկս, Հրանուշին ամուսնացրել են մի տաճիկի հետ. Սմբատիս (տղաս) սպանել են. եղբայրս՝ Եղւարդն էլ սպանւած է. իսկ միջակ եղբայրս՝ Արշակը իր երեք ընկերներով փախչելով պահւում են մի տան մէջ, բայց վերջը մատնւելով բռնւում է և նրան էլ այնտեղ իր երկու ընկերների հետ միասին սպանում են.

Մայրդ աքսորւած է, հայրդ նոյնպէս, իսկ մեծ եղբայրդ՝ Գրիգորը հիւանդանալով մեռած է. փոքր երկու եղբայրներդ էլ սպանւած են. եղբօրդ կինը՝ Սաթենիկը աքսորւած է. իսկ քոյրդ, Զւարթը մի թուրքի հետ ամուսնացրել են, եղբօրդ երեխան՝ Նուպարը նրա մօտ է. Ռուս զօրքի Տրապիզոն մտնելուց առաջ թուրքերը բոլորին էլ հետները տարել են.

Քաղաքում թուրք չկայ, բոլորն էլ փախած են. Հետզհետէ գիւղերից տղամարդիկ գալիս են մաս մաս».

Ն. Մուրադեան

ԷՐԶՐՈՒՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ *)

II

Մի կերպ տեղաւորւելով թրքական գիւղերում, գաղթականները ներկայումս քարշ են տալիս մի վերին աստիճանի ողորմելի, աւելի քան մուրացիկ կեանք. Սնւում են բացառապէս ցամաք հացով և այն էլ ճարւում է ոչ ամեն օր և ոչ կշտացնելու քանակութեամբ. Այդ խղճուկ պարէնալիւրը գաղթականները գնել են Ղարսի և Բաշքէօյի կիսով չափ չէն մնացած հայ գիւղերում, որոնք ռուսական Բասենի առաջին սահմանակից գիւղերը լինելով, համեմատաբար շատ չեն ենթարկել աւերածութեան. Գնում են կառավարութեան տւած 15 կոպէկով, որ, փակագծի մէջ ասենք, ստացել են մինչև հիմա ընդամենը 2 ամիս, անցեալ նոյեմբ.-դեկտ. ամիսներում. Մեզ ասացին, որ այդ շրջանում գործող պ. Նանիկեանը գնացել է Կարս, յունւար, փետրւար և մարտ ամիսների 15-ական կոպ. նպաստն ստանալու. Որքան ճիշտ է և արդեօք 3 ամսւայ նպաստ պէտք է ստացւի,—չեմ երաշխաւորում. Հիւանդութիւնները տարածւած են ամբողջ շրջանում. գլխաւորապէս տարածւած է ցինգա կոչւած տեսակը, որ գրեթէ համատարած է. Մեզ ասացին, որ կայ նաև տիֆ կոչւած հիւանդութիւնը, սահմանափակ շրջանում. Բժիշկ և բժշկական օգնութիւն—բոլորովին չկայ. հագուստները աննկարագրելի ցնցոտիներ են, վերմակ և այլն, չունին, չեն ստացել և նոյն իսկ երազ է թւում նրանց այդ «շքեղութիւնը». Չնայելով այդքան թշւառութեան, սովալլուկ վիճակին, գաղթականներից ոմանք, այնուամենայնիւ, կարողացել են մի չնչին քանակութեամբ, ցանել. Հողեր մշակելու, ցանելու հողեր շատ կան տրամադրելի, նոյն իսկ իրենց բնակած թրքական գիւղերում. Սակայն ընդհանուր, կարդինալ հարցը սերմացուի խնդիրն է, որ չի ճարւում և որ գլխաւորն է, ներկայ գարնանացանի ժամանակ, ոչ մի տեղից օգնութիւն ձեռք չմեկնւեց, չընայելով այնքան աղաղակներին, մինչև երկինք հասնող նրանց աղերսանքներին. Ցանքս անող գաղթականը, յուսահատւած, եկող տարւայ անխուսափելի սովի ուրւականն աչքի առաջ ունենալով, ծախել է իր վերջին կովը, եզը, նոյն իսկ եաթաղը (անկողնը), ծախել է ինչ որ մնացել էր, և փութը 5—5 ռ. 50 կ.-ով, ձեռք է բերել Կարսի շրջանում սերմ.

Մեր հաւաքած տեղեկութիւններով, Բասենի շրջանում մեր ճանապարհի վրայ ընկած գիւղերում, ցանել են միջին թւով ընտանիքը մէկ փութ. Ի նկատի ունենալով այս կողմերի մշտաբերութիւնը, ուժասպառ և երկրագործութեան համար գրեթէ անպէտք, անջրդի հողերը, իրենց ասելով, այս տարի, ներկայ աննպաստ պայմաններում—որովհետև գութան չի եղել, որ հողը կարգին վարեն, գործել են արօրով,—հազիւ կարողանան մէկին՝ 2 ստանալ միջին թւով. Ինչպէս տեսնում էք, ստացւելիք բերքը, ոչ աւել, ոչ պակաս, մի աննշան հիւլէ է, մի կաթիլ ծով կարիքի հանդէպ. Անհրաժեշտ է իսկոյնևեթ չնչտել այստեղ և հրաւիրել բոլոր բարեգործական ընկերութիւնների ուշադրութիւնը, նամանաւանդ Հայ Գիւղատնտեսական ընկերութեան ուշադրութիւնը, գոնէ աշնանացանի համար սերմացու հասցնել և աչքաթող չանել Բասենը, անշուշտ հնարաւոր չափով.

Երկրագործական գործիքներ—գութան, գերանդի, մանգաղ, արօր և այլն գրեթէ չկան.—եզներն էլ այն էլ չնչին քանակութեամբ, արօրներ են, ուրիշ ոչինչ. Չկան նոյնպէս աշխատող եզներ. Մեր հաւաքած տեղեկութիւններով պարզւեց, որ միջին թւով 4—5 տունը 1 զոյգ կամ առաւելը 2 զոյգ եզ հազիւ ունենայ և այն էլ այնքան նիհար, անոյժ, որ ընդունակ չէ հերկելու կամ այլ աշխատանքի, որովհետև ուտելիք, ինչպէս մարդկանց, նոյնպէս, գուցէ և աւելի սակաւ, անասունների համար—չկայ. Երկրագործական գործիքներ, եզներ և սերմացու—գարի, ցորեն,—ահա թէ ինչ այրող կարիքի առաջ է կանգնած գաղթական հայը ամենուրեք եկող աշնանացանի ժամանակ. Մեր կարծիքով, դրանք կենսական կարդինալ հարցեր են, որ ամենից առաջ բաւարարւելու պահանջ ունեն, աւելի անհրաժեշտ, չյետաձգւող պահանջ, քան թէ նոյնիսկ այսօրւայ հացը, բժշկական օգնութիւնը և նման անհրաժեշտութիւններ.

Մեր բոլոր տեղեկութիւնները վերածելով կոնկրետ թւերի, կը ստանանք՝

1.—Ղարաքիլիսայի շրջան—8 գիւղ, 176 ընտանիք, 1,760 հոգի.

2.—Արփաչայիրի շրջան—10 գիւղ, 158 ընտանիք, 2,000 հոգի.

3.—Ալիջաքրակի շրջան—10 գիւղ, 270 ընտանիք, 2,700 հոգի.

4.—Ամրագոմի շրջան — 21 գիւղ, 425 ընտանիք, 4,250 հոգի.

Քեօփրիքէօյի շրջանում 7 գ. մօտ 100 ընտանիք—1000 հոգի. Վերջին շրջանի մասին մեր հաւաքած թւերը հաղորդել են Ամրագոմցիք. անձամբ գնալու և ստուգելու հնարաւորութիւնից զուրկ էինք.

Ուրեմն, Բաշքէօյից մինչև Քեօփրիքէօյ (չհաշւած Բաշքէօյը) այդ տարածութեան վրայ ապրում են գաղթականներ 11,780 հոգի, 1,129 ընտանիք՝ տեղաւորւած 56 գիւղերում.

Անշուշտ, կարող են լինել և ուրիշները, որոնք տեղաւորւած լինելով աւելի հեռու վայրերում, հնարաւորութիւն չունեցանք արձանագրելու նրանց թիւը և մեր հարց ու փորձի ենթարկած գիւղացիները ոչ մի տեղեկութիւն չհաղորդեցին նրանց մասին.

Որովհետև մեր ճանապարհորդութեան արդիւնքի տեսութիւնը առանց այդ էլ երկարեց և «Հորիզոնի» սուղ էջերը, հազիւ թէ եղածը հիւրընկալէ, դրա համար մենք սեղմեցինք մեր տպաւորութիւնները և աւելի մանրամասն վիճակագրական տեղեկութիւններ Բասենի շրջանի գաղթականների վերաբերեալ, դուրս թողինք, թէև դա կարևոր վիճակագրութիւն անգամ լինէր, օրինակ մանրամասն թւեր եզների, ցանքի, գիւղի անուններ, հեռաւորութիւն, տեղափոխական ճանապարհներ և այլն... Ներկայ ողբալի կացութեան լրիւ տեսութիւնը, լրիւ ու ամփոփ պատկերը տալու համար մանրամասնութիւններն անհրաժեշտ էին, նամանաւանդ վարչականների, արտամարգերի և այլն քանակը.

Բաւականանանք այսքանով, չեշտելով մի կարևոր հանգամանք, որ Էրզրում հասնելուց յետոյ, ինչպէս յանձնարարւած էր Քաղաքների Միութեան Գլխաւոր Կովկասեան Կոմիտէից, մեր բոլոր հաւաքած տեղեկութիւնները մենք ներկայացրինք Սարիղամիշ—Էրզրումի ռայոնի Քաղ. Միութեան յատուկ լիազօր բժ. Մարգարեանին, որի մասնակցութեամբ, որին մասնակցեց պրն. Ռոստոմը, կազմւեց խորհրդակցութիւն. Այդ խորհրդակցութեան հետեւանքը առանձին զեկուցումով, ներկայացւած է Կովկասեան Գլխաւոր Կոմիտէին (Թիֆլիսում), ինչպէս նաև օգնութեան գործի նախահաշիւը 15,000 գաղթականների համար սննդառու և բժշկական կէտեր հիմնելու համար.

Կը սպասենք նախահաշւի հաստատութեան և այնուհետև կանցնենք գործի.

Ս. Օհանջանեան

Էրզրում, 13 ապրիլի

*) Տես «Հորիզոն» № 87.

ՊԱՏԵՐԱԶՄ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

ԳԼԽ. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՇՏԱԲԻՑ

21 ապրիլի

Արևմտեան ճակատ.—Թշնամին թնդանօթային եռուն կրակ էր բացել Իկսկիւլի շրջանի և Դւինսկի դիրքերի դէմ Դւինսկից դէպի հարաւ-արևմուտք. Դւինսկի շրջանի հարաւակողմը ճակատի շատ մասերում երևացին թշնամու օդանաւեր, որոնց ռումբեր էին նետում. Կրևօ աւանի հարաւային կողմը տաք թնդանօթաձգութեան ենթակայեց, որի ժամանակ մեր հրանօթներից մէկը պայթեցրեց թռիչքով կապւած մի օդապարիկ, որ ուղղում էր թնդանօթաձգութիւնը.

Կովկասեան ճակատ.—Բաբերդի ուղղութեամբ թուրքերի գիշերային յարձակումը վերջերս նրանցից խլւած դիրքի մասի դէմ յետ է մղւած, նմանապէս յետ է մղւած մեր զօրքերի կողմից թշնամու գիշերային յարձակումը Երզնկայի ուղղութեամբ.

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏ

ՓԱՐԻԶ, 20 ապրիլի.—Հաւասի գործակալութիւնը հաղորդում է. Չորեքշաբթի ֆրանսիացի զօրքերը զարգացրին՝ 16—17-ին Մորտոմի մօտ իրենց ունեցած տեղական աջողութիւնը, Շանթաւորող յարձակումով նրանք գրաւեցին «295» բարձունքի հիւսիսարևմտեան և ձախ կողմի գերմանական դիրքերը՝ խրամատների մէջ գերի վերցնելով մօտ 100 հոգի և 4 գնդացիր. Վերջերս յաճախակի պատահող և մեզ համար աջող դէպքերը չափազանց նպաստաւոր եղած են. Դա հաստատւում է նրանով, որ մի քանի ժամանակից ի վեր Վերդենի գործողութիւնների մասին թշնամու հաղորդագրութիւնները չափազանց համառօտ են և յայտնագործում են հակառակորդին տիրող շփոթութիւնը. Առ հասարակ, օրից օր մեր առաջխաղացութիւնը հեռացնում է թշնամու սպառնալիքը Մորտոմին. Եթէ մեր աջողութիւնն աւելի ևս ընդլայնւի, Մորտոմը վերջնականապէս դուրս կը հանւի սպառնալիքի ենթակայ դրութիւնից, ուր նա գտնւում էր, ինչպէս այդ պատահեց «304» բարձունքի հետ, որի վրայ թշնամու գրոհները դադարեցրին, հենց որ մարտի կէսին յետ վերցրինք Աւոկուրի անտառը. Այդ կերպով մեր առաջ տարւած գործողութիւնների շրջանը, Մաաս ձախ ափի վրայ օրից օր ընդլայնւում է դիմադրութեան գլխաւոր կէտերի շուրջը, որոնք կազմւում են Վերդենի պաշտպանութեան առաջին գիծը.

ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

ՍՈԼՈՒՆ, 20 ապր.—Ճակատի վրայ ուժեղ գործունէութիւն են ցոյց տալիս թշնամու աէրօպլանները. Երկու կողմից եռանդուն թնդանօթաձգութիւն է տեղի ունենում.

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՍՏԱՒԱՆԳԵՐ, 20 ապրիլի.—Առաւօտեան նկատւած օդանաւը պարզւեց, որ զինւոր «Լ. 20» աէրօստատն է. Նա եկաւ Գաֆիորդում բստ երևոյթին փչացած լինելով. Մարդիկը Գոնդոլից դուրս թռան ևնին մօտ.

ԼՈՆԴՈՆ, 20 ապրիլի.—Պաշտօնապէս հաղորդւում է. Թշնամու մի աէրօպլան ապրիլի 20-ի ցերեկով բարձրացաւ Դիլի վրայ և ձգեց 6 ռումբ երկաթուղու կայարանի վրայ՝ սաստիկ վնասելով մի քանի տներ և վիրաւորելով մի բնակիչ. Աէրօպլանը ծածկեց ամպերի մէջ. մեր օդաչուները նրան հետապնդում էին.

ՍՏԱՒԱՆԳԵՐ, 20 ապրիլի.—«Ցեպպելին 20»-ը, որ ցած էր եկել Գանֆիորդում, երկու անգամ փորձեց բարձրանալ, սակայն վերջ ի վերջոյ ընկաւ և կոտրւեց. Մարդկանցից մի մի մասն աղատւեց նորւեգիական սկանաւի կողմից և երկրի խորքն ուղարկւեց.

ԼՈՆԴՈՆ, 20 ապր.— Պաշտօնապէս հաղորդւում է. Երեկւայ թռիչքին մասնակցում էին 5—6 «ցեպպելիններ», իբարից շատ հեռու վայրերում. Երկու կէտերում «ցեպպելինները» փորձեցին թափանցել երկրի խորքը. Ընդամենը մօտ 100 ռումբ է ձգւած, որոնցից մեծ մասն ընկաւ անբնակ տեղեր և ծովը. Միայն մի վայրում սպանեցին 6 տղամարդիկ ու երեք կին, վիրաւորեցին 19 տղամարդ և 8 կին, փչացրին 19 տներ. Երկու գնդացիր յարձակողները մտնեցան թնդանօթային կրակի հեռաւորութեան և անմիջապէս հեռացան.

ԳԵՐՄԱՆԻԱ

ՍՏՈԿՀՈԼՄ, 20 ապրիլ.—Վոլֆ գործակալութիւնը հաղորդում է, մայիսի 1-ին Պոտսդամեան հրապարակում բռնւած ցուցարարների մէջ գտնւում էր պատգամաւոր Լիբկնեխտ. Որովհետև նա ձերբակալման միջոցին քաղաքացիական հագուստով էր, բ... ներկայումս զինւորական ծառայութեան մէջ է, զինւորական իշխանութիւնները քննութիւն կատարեցին, որից յետոյ Լիբկնեխտը բանտարկւեց.

Պաշտօնապէս հաստատւում է, մայիսի 1-ին Բերլինում ամենամեծ գաշատ հրապարակների վրայ ցոյցեր են կատարւել, որոնք առիթ են տւ... ձերբակալութիւնների.

Բերլինից ստացւած տեղեկութիւնների համաձայն, «Լոկալ Անցեյգեր» հաղորդում է, որ Միացեալ Նահանգների յայտագրին գերմանական կառավարութեան տալիք պատասխանը ... կան կէտերով պատրաստ է. Եթէ կառավարութեան ընդունած որոշման մ... ոչ մի փոփոխութիւն չկատարւի, յա... տագիրը ամերիկեան դեսպանին յանձնւի վաղը ցերեկը.

ԱՆՆԱՄՍ, 20 ապրիլ.—Շւեյցարական լրագիրները հաղորդում են. Բր... գեցի մի բժիշկ և հարաւ-ամերիկեան մի դիպլոմատ, որոնք վերադարձել են Բերլինից, ուր նրանք տարել են տարի, հաստատում են, որ այդ քաղաքում 5 խռովութիւն է եղել կանան... կողմից. Այդ խռովութիւններից մէկը ճնշւել է գնդացիրներով. Այդ անձերի ասելով, դժգոհութիւնը Գերմանիայում աճում է. Առաջին անաջողութիւն... կատաստրոֆ պիտի առաջացնի.

ՌՈՒՍ ԶՕՐՔԻ ԴԵՍԱՆՏ ՄԱՐՍԷՅԼՈՒՄ

ՄԱՐՍԷՅԼ, 20 ապրիլի.—Միրաբոյի բանակատեղի տաղաւարում կայացաւ երեկ ռուս զօրքերի հետ նոր հասածների պաշտօնական ընդունելութիւնը. Գեներալ Բերիէնն ողջունեց ֆրանսիացիների, անգլիացիների բելգիացիների հետ միասին ... ներական դաշի կռւելու եկածներին. Գնդապետ Օզնոբիշինը շնորհակալութիւն յայտնեց և բաժակ առաջարկեց ֆրանսիական քաջարի բանակի և ... տալուտ յաղթանակի կենացը.

ԱՆԳԼԻԱ

ԼՈՆԴՈՆ, 19 ապրիլ.—Համայնքների պալատ. Ասկվիտը պարզելով կառավարութեան վերաբերմունքը զինւորական ծառայութեան նկատմամբ, ...սաց. «Պատերազմի սկզբից անգլիական բանակը աճեց անսովոր չափով. 1914 թ. օգոստոսին բրիտանական բանակ բաղկացած էր 26 դիւիզիայից. հիմա միայն անգլիական բանակը բաղկանում է 71 դիւիզիայից. իսկ գաղութային զօրքերի հետ միասին կազմում է 83 դիւիզիա, առանց հաշւելու հնդիկ զօրքերին. Զինւորական-ծովային զօրակոչը պատերազմի սկզբից ի վեր անց 5 միլիոնից աւելի մարդ. Ասկվիտը շարունակեց. «Եթէ եղել են սխալներ ու վրիպումներ, բայց և այնպէս գործը շարունակ զարգանում և հիմա տարւում է աւելի լաւ. Իսկ ծովային զինւորական դրութիւնն երբեք այնքան գոհացուցիչ չէ եղել, ինչպէս հիմա. Թնդանօթաձգութիւնը մեծ համար նշանակութիւն չունի, ... վայելում ենք երկրի վստահութիւն...

Օրինագծի վիճաբանութիւնները ... բունակւում են. Զինւորական ծառայութեան կողմնակիցների և հակառակորդների ճառերն իրար են յաջորդում. Ասկվիտի ճառից ընդհանուր տպաւորութիւնն այն է, որ նա ամրապնդեց կառավարութեան դիրքը. Պարտադիր ծառայութեան օրինագծի ընդունելութիւնն ապահովւած է.

ԼՈՆԴՈՆ, 20 ապր.— Համայնքների պալատ. Նոր օրինագիծ մտցնելով պարտադիր զինւորական ծառայութեան մասին, Ասկվիտը յայտարարեց, որ օրինագիծն իր ընդհանուր գծերի մէջ չէ փոփոխւած. Զինւորական պարտադիր ծառայութիւնը տարածւում 18—41 տարեկան բոլոր ամուրի և ամուսնացած տղամարդկանց վրայ. Օրինագիծն ուժի մէջ է մնում պատերազմի ամբողջ ժամանակ ... ընդունելուց 30 ... յետոյ 18 տարեկաններին մի ... յիսամեայ է տրւում՝ բանակին կամ ծովային զորքերի համար. Ասկվիտը պարզեց, որ անհրաժեշտ է իշխանութիւններին լիազօրութիւն տալ, որպէսզի տերրիտորիալ զօրքերին զինւորական միաւորից մի ուրիշը փոխադրել.

ԼՈՆԴՈՆ, 20 ապր.—Դուբլինում հըրատարակւեց հետեւեալ պաշտօնական հաղորդագրութիւնը. Ստացուածների համաձայն, հետեւեալ կոմսութիւններում տիրում է կատարեալ անդորրութիւն. Վատերֆորդում, Կինգսկաունտիում, Կուինսկաունտիում, Ոսիքոլում, Կարլոյում, արեւմտեան Կորկում, արեւելեան Գոլուէյում, Մէյոկիում, Բելֆաստում եւ Օլստերում. Հետեւեալ վայրերում կարգը վերահաստատուած է. Դուբլինում, Կորկում, Տրելիում եւ Լիմրիկում. Այն ապստամբները, որոնց մեղաւորութիւնը հաստատւեց, յանձնուած են զինւորական դաշտային դատարանին. Դատավճիռները հենց որ հաստատուեն՝ այդ մասին կը հաղորդւի. Այն ձերբակալուածները, որոնց գործերը չկարողացան քննել անմիջապէս, ուղարկւում են անգլիական բանտերը. Ձերբակալուած կանանց գործերը քննւում են. Այսպիսի գործերի դատական քննութիւնը չափազանց բարդ է եւ տեղի է ունենում հնարաւոր շտապողականութեամբ.

Իռլանդական գործերի քարտուղարը հրաժարական տւեց.

ԼՈՆԴՈՆ, 20 ապրիլ.—Լորդ Ֆրենչը հաղորդագրում է. Զէնքի գրաւումն ու փախուստ տւած ապստամբների ձերբակալութիւնները գոհացուցիչ կերպով են ընթանում. Ամենուրեք գործերի շղթաները են պահւում. Ապստամբները յարձակւեցին Գալուէյի մօտ Օրանմորի ոստիկանական կազմանների վրայ. Ոստիկանութիւնը դիմադրեց յարձակման մինչեւ օգնական ուժի գալը. Գալուէյի կոմսութեան արեւմտեան շրջաններում դըրութիւնը լաւացաւ. Ապստամբները ցրիւ տւեցին. Իռլանդիայի հարաւում, Ուլստերում խաղաղ է. կեանքը բնականոն է ընթանում.

ԼՈՆԴՈՆ, 20 ապր.— Համայնքների պալատ. Ասկւիտը հաղորդեց, որ հանրապետական կոչ ստորագրած 3 իրլանդացիներ—Պիրս, որ ինքնիրեն նախագահ էր անւանում, Կլարկ եւ Մակդոնալդ—այս առաւօտեան հրացանազարկ արւեցին զինւորադաշտային դատարանի վճռով. Երեք ուրիշ պարագլուխները եռամեայ բանտարկութեան դատապարտւեցին.

ԼՈՆԴՈՆ, 20 ապր.—Դուբլինից պաշտօնապէս հաղորդւում է, որ միայն հիւանդանոցում մեռնողների թիւը հասնում է 180-ի, որոնց մէջ եւ 66 զինւոր, մնացածները ապստամբներ են ու բնակիչներ. Վիրաւոր ու քանդուած շէնքերի թիւը հասնում է 179 ի.

ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՄ

ՀԱՒՐ, 20 ապր.—Պաշտօնապէս հաղորդւում է. Կոնգոյի արեւելեան սահմանում բելգիական զօրքերը Ռուզիզիա գետի վրայ գտնւող դիրքերի թիկունքն անցնելով, Կիվու լճից դէպի հարաւ, ստիպեցին գերմանացիներին հեռանալ նրանցից. Դրանից անմիջապէս յետոյ բելգիացիները անցան գետից եւ գրաւեցին Շանգուգուի գերմանական դիրքերը. Կիվու լճից դէպի հիւսիս բելգիացիները նոյնպէս մտան գերմանական տերրիտորիայի սահմանները.

ՉԻՆԱՍՏԱՆ

ՊԵԿԻՆ, 20 ապրիլ.— Նապոնեայից(?) ստացուած տեղեկութիւնների համաձայն Պեկինի կառավարութիւնն ապստամբներին առաջարկել էր երկարացնել զինադադարի ժամանակամիջոցը դարձեալ մի ամիս. պատասխան է ստացուած, որ եթէ մինչեւ այդ ժամանակամիջոցը լրանալը, այսինքն մինչեւ ապրիլի 23-ը Եուանշիկայը չթողնի իր պաշտօնը, այն ժամանակ պատերազմական գործողութիւնները կը վերսկսուեն. Նոյն տեղեկութիւնների համաձայն, մինիստր-նախագահի նախագահութեամբ զինւորական միտինգ է կայացել նախագահի հեռանալուց յետոյ մայրաքաղաքում կարգը պահպանելու համար միջոցներ մշակելու.

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՊԵՏՐՈԳՐԱԴ, 21 ապրիլ.—Բարձրագոյն ուկազ կառավարիչ սենատին. Ի փոփոխութիւն 1916 թւի ապրիլի 7-ին կառավարիչ սենատին տւած Մեր ուկազի I կէտի, հրամայում ենք 1897 թւին ծնւած երիտասարդների զինակոչի սկզբնական ժամանակը նշանակել ամեն տեղ 1916 թւի մայիսի 15-ը, պահպանելով ընդ սմին մի քանի տեղերի համար վերոյիշեալ ուկազի II եւ III կէտերի մէջ յիշատակուած բացառութիւնները. Կառավարիչ սենատը չպիտի յապաղի այս մասին հարկաւոր կարգադրութիւնն անել.

Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան սեփական ձեռքով գրուած է՝ ՆԻԿՈԼԱՅ.

Ցարսկոյէ-Սելօ, 20 ապրիլի 1916 թ.

Վաւերացրեց զինւորական մինիստր, ինֆանտերիայի գեներալ Շուվաեւ.

ՊԵՏՐՈԳՐԱԴ, 21 ապրիլ.—Այսօր սերբիական մինիստրների խորհրդի նախագահ Պաշիչը արտաքին գործերի մինիստրի օգնական Իովանովիչը եւ Պաշիչի քարտուղար Սանկովիչը Պետրոգրադի սերբիական դեսպան Սպալայկովիչի հետ արտակարգ գնացքով մեկնեցին Ցարսկոյէ Սելօ, ուր Պաշիչն ընդունւեց Թագաւոր Կայսրի մօտ առանձին ունկնդրութեան.

ՊԵՏՐՈԳՐԱԴ, 21 ապրիլ.—Վախճանւեց պետական նախկին կոնտրոլեօր Խարիտոնովը.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՃԱԿԱՏԻՑ

Նախ քան առաջաւոր դիրքեր գնալը, մենք ճանապարհւեցինք մեր գնդի հանգստավայրը, Ն. գիւղը, որը 4—5 վերստի վրայ էր գտնւում առաջաւոր դիրքերից. Զօրքերը բատալիոնի բոլոր վաշտերը հերթով ընթանում էին նեղ ուղիով, զոյգ-զոյգ կարգերով. զինւորները ծանրաբեռնուած էին արշաւանքային լիակատար սարքով ու կարգի պարագաներով, իսկ վաշտային սայլակներն ու խոհանոցները կրում էին բոլոր անհրաժեշտ իրերը. Վաշտերի առջեւից ձիու վրայ նստած առաջ էինք ընթանում վաշտապետներս. Ճանապարհին վիրակապային կայանում ծխախոտ նւիրեցին մեր զինւորներին. Մառախլապատ էր օրը, ձիւնախառն, Նոր Տարւայ եօթներորդ օրը. Մենք միանգամայն ապահով հասանք մեր գնդի ընդհանուր հանգստավայրը. մեր վաշտերը տեղաւորւեցին որոշ գետնափորներում. Երկու-երեք օրւայ աշխատանքից յետոյ այդ գետնափորներն արդէն վերածւեցին կանոնաւոր սենեակների՝ յատակով, լուսամուտներով, դռներով եւ վառարաններով. Սպաներիս գետնափոր բնակարանները նոյնպէս կարգի բերւեցին. տախտակեայ մահճակալների վրայ փռեցինք դարման ու խոտ եւ պառկեցինք հանգստանալու. Տաքւում էինք եւ քնում այնպէս, ինչպէս ազատ քաղաքացի.

Հանգստավայրում մնացինք մի քանի օր. բոլոր զինւորներն ենթարկւեցին հակատիֆային պատւաստի, այդ պատճառով էլ ուշացաւ մեր առաջաւոր դիրքեր գնալը, քանի որ հակատիֆային պատւաստումը կրկնւեց. Հանգստավայրում յաճախ ճաշում էինք ընդհանուր սպայական ակումբում, ուր մեր գնդային նւագախումբը նւագում էր ճաշերիս եւ ընթրիքս. այդ նւագածութիւնը, ղեկավարութեամբ մի հայ պարոնի, մեծ բաւականութիւն էր պատճառում մեզ եւ յիշեցնում էր մեր կուլտուրական մօտիկ անցեալը եւ անկաշկանդ կենցաղը...

Պարսկական բայաթին, «Զէյթունցոց մարշը», «Մեր հայրենիքը», «Սրաւալ(?) ժամերը» եւ այլ կովկասեան տաղերն ու երգերն էին հնչում ռուսական հիմնին եւ մեր գնդին յատկանիշ քայլերգին. Բոլոր գնդերն ունին իրենց առանձնական որոշ մարշերը, որոնք նւագւում են զօրահանդէսներին, տօնախմբութիւնների եւ կենացների յիշատակութեան ժամանակ. Գնդի բոլոր սպաներս ծանօթացանք իրար հետ եւ փոխադարձաբար այցելեցինք իրար եւ հիւրասիրւեցինք.

Մարտական մարզանքներն ու դիրքերում աշխատելը շարունակւում էին իրենց կարգով. Դիրքային նիստ ու կացին համարեա թէ բոլորս արդէն ծանօթ էինք՝ շնորհիւ ցերեկով կամ գիշերով դիրքերում տեղի ունեցող աշխատանքների. Մենք գնում էինք խրամատները ձիւնից մաքրում կամ գետնափորները շտկում, քանի որ դիրքերի մարտիկները կռւով գրաւած լինելով՝ անկարող էին այդ բոլորը կատարել.

Ժամը հասաւ վերջապէս. ամբողջ գունդը կանգնած գրաւում գլխաբաց աղօթում էր. Ինչեց գնդապետի հրահանգը՝ «ծածկել», ապա «յառաջ», «առաջին հազարեակ (բատալիոն) սկսիր». Այնուհետեւ հազարապետները եւ վաշտապետները արձակեցին համապատասխան հրամանները եւ հազարեակներն ու վաշտերը յառաջ քայլեցին աջ կամ ձախ թեւերով, կարգով, իրար ետեւից. զինւորները գլխարկները ծածկելով, մի քանի անգամ ջերմօրէն խաչակնքեցին եւ դիմեցին յառաջ.

Մի քանի ժամից յետոյ, գիշերւայ ժամը 10-ին, մեր գունդը դիրքերումն էր արդէն. փոխարինեցինք մեր գրնդակերեան(?) գիւղիայի Ն.-եան գնդին. Կատարւեց ստացողական—յանձնողական գործողութիւնը, ինչպէս խրամատներում, այնպէս եւ պահեստներում (ռեզերւ). Մեր ջոկէլ, նորակազմ հազարեակի վաշտերը տեղաւորւեցին պահեստներում.

Ցանկապատս իմ վաշտը ռեզերւում մնաց միայն 2—3 օր, իսկ դիրքերում կէս ամիս. Դիրքային ռեզերւում ոչ մի պարապմունք չկար, միայն երբեմն 2—3 տասնեակ զինւոր էր ուղարկւում բուք-բորան եղանակին խրամատները մաքրելու համար. ամեն րոպէ կազմ ու պատրաստ էինք օգնութեան հասնելու անակնկալի դէպքում. Այստեղ, անտառում, թշնամու գնդակները յաճախ էին լսւում, իսկ հրանօթները աւելի շատ ընկնում էին ռեզերւի շրջանը, քան թէ խրամատները. Մեր հրանօթները նոյնպէս թնդում էին մեր գլխավերեւով դէպի թշնամին. Ես ապագայում իմացայ միայն, որ յաճախ ռեզերւում լինելը աւելի վատ է, քան դիրքերում. աւելի ես գոհ էր(?), սակայն թշնամուն չես նշմարում եւ նրան պատասխանելու հնարաւորութիւնից զրկուած ես. Այսպէս, մեր հազարեակի 16 րդ վաշտը շատ վատ ռեզերւումն էր կանգնած. դա մեր գնդի ձախ թեւումն էր, Շ. գիւղի մօտ. այդ տեղը շարունակ թըշնամու կողմից ենթարկւում էր թընդանօթային ռմբակոծութեան եւ խեղճերն առանց թշնամու երեսը տեսնելու՝ ունին 3 սպանուած եւ 6 վիրաւոր. Բարեբախտաբար վաշտս ռեզերւում մնաց անփորձ եւ տեղափոխւեց դիրքերը միանգամայն առողջ տրամադրութեամբ. ուշ գիշերով անտառից դուրս գալով, հաղորդակցութեան թըկունքային անցքով մէկիկ-մէկիկ անցնելով, մտանք առաջաւոր դիրքերը եւ գրաւեցինք մեր տեղերը.

Ցոլակ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Շատերը, վանեցի փախստականներից, դիմում են ինձ խնդրելով Ազգ. Բիւրոյի հասցէին Ամերիկայից իրենց ուղարկուած գումարները գանձել ու ճամբել.

ՄԻ ՓՈՔՐԻԿ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Կան մի շարք գումարներ, որոնք բոլորը մի չէքով են, եւ որը դժբախտաբար մինչեւ այժմ Ազգ. Բիւրօն գանձել չկրցաւ.

Իրողութիւնը այս է. չէքը գալիս է Ազգ. Բիւրօյի անունով, նոյնաժամանակ լուր է տրւում եւ որոշեալ բանկին. Վերջինս լուր ստացած ժամանակն է միայն վճարում անում. Սրա վրայ պէտք է աւելացնել եւ այն, որ բանկերը չէքերը ճամբում են Պետրոգրադ, այնտեղ գանձում եւ ապա այստեղ վճարում Ազգ. Բիւրօյին. Ձգձգումների պատճառը պէտք է ամբողջապէս որոնել բանկերի այս երկար ու ձիգ օրէնքների մէջ.

Վերջերս այս բոլորի վրայ աւելացաւ եւ մի նոր ցաւ. չէքերից մէկը, որի մէջ դրամ ունէին Մ. Կանտոեան, Ց. Մխիթարեան, Կ. Թորգոմեան, եւ այլք, որոնք դիմել են ինձ, թէեւ ճամբուած է Պետրոգրադ, բայց չի գանձուած, որովհետեւ բանկը կասկածի(?), որ ինքը դեռ լուր չունի. Այս պայմաններում Ազգային Բիւրօն մեղադրել, որ նա չի օգնել գաղթականների դրամական փոխադրութեան գործին, հակառակ նրան՝ որ Ամերիկայում եւ այստեղ այդ մարզի վրայ նայում են իբրեւ միակ վստահելի ու գործին յարմարը, անարդար է. Մտքիս գիտեմ, որ Ազգային Բիւրոյի դիւանը ահագին ջանքեր է թափում, իր միջոցներով հեռագիրներ է տալիս գործն արագացնելու համար եւ ոչինչ չի օգնում. Իմ կարծիքով գաղթականները փոխանակ սրան նրան մեղադրելու կամ անտեղի տրտնջալու, լաւ կանեն—մանաւանդ որ իրենց մէջ կան ժամանակին այդ դրամական փոխադրութեան ձեռներն ծանօթ մարդիկ—որ ծանօթանալով ռուսական բանկերի հետ, իրենց ցուցմունքներ անեն Ամերիկա եւ այլուր, թէ ինչ բանկերի վրայ եւ ինչ ձեւով փոխադրեն, որպէս զի դրամները շուտ հասնեն.

Այդ պիտի անեն մանաւանդ Տ.-ճ.կանայ(?) Միութիւնները, որոնք կոչուած են օգնելու ժողովրդին հենց այդպիսի գործերի համար.

Վերոյիշեալ չէքի մասին մանաւորապէս հեռագրուած է Ամերիկա. տէրերը թող ապահով լինեն, որ առանց իմ միջամտութեանն էլ՝ երբ դրամը ստացւի՝ կը փոխադրւի ըստ պատկանելոյն.

Արամ

Թիֆլիս, 22 ապր.

ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Թիֆլիսի Հայոց Գիւղատնտեսական ընկերութիւնը ստացաւ Փոխարքայի դիւանատնից ի հաշիւ այն 120,000 ռ., որ յատկացուած էր Վանի շրջանի ազգաբնակութեան գիւղատնտեսական կարիքները հոգալու համար՝ 75,000 ռ., որով ընդամէնը ստացել է 100,000 ռուբ.

◆ Քաղաք. Միութիւնը Սիկենիկի(?) (Մուշի շրջ.) նոր հիւանդանոցի համար ուղարկել է մի ֆելդշեր. Նոյն Միութիւնը բժ. Տիգրան Աղամալեանին նշանակել է Տրապիզոնի լիազոր եւ Վ. Քաջազնունին՝ Իգդիր — Վան գծի վրայ գտնւած սննդատու կայանների գլխաւոր կառավարիչ.

◆ Քաղաք. Միութիւնը կազմակերպում է 2 րդ թռուցիկ խումբ, որը ուղարկւելու է Մուշի ուղղութեամբ գործող զօրքի ետեւից՝ որբ երեխաներին հաւաքելու համար.

◆ Քաղաք. Միութիւնը բժ. Ալթունեանին եւ մի քանի ֆելդշերների ուղարկում է Երզրում փախստականներին բժշկական անմիջական օգնութիւն հասցնելու համար.

◆ Բժ. Տէր-Մինասեանը հաղորդում է Քաղաք. Միութեանը, որ ինքը Ղարաքիլիսէյում բացել է պահեստ եւ ֆելդշերական կայան, բացել է նոյնպէս մի հիւանդանոց Խնուսում, մի բժշկական կայան Մուշում, մի որբերի տուն Ղարաքիլիսայում եւ Խնուսում, մի-մի սննդատու կայաններ Խնուսում եւ Մուշում եւ 3 կայան Մուշի եւ Խնուսի միջեւ.

◆ Քաղաք. Միութեան կողմից Միութեան անդամ Ա. Ս. Բաբեանը գնում է Տրապիզոն եւ նրա շրջանները կոտորածից ազատուած հայ որբ երեխաներ հաւաքելու. բացի այդ՝ Բաբեանին առաջարկւած է որոշել որբ երեխաների քանակը եւ հաղորդել թէ քանի երեխաների համար կարելի է Տրապիզոնում որբանոց եւ սննդատու կայաններ բանալ.

◆ Կովկասեան ռազմաճակատի գաղթական. գործի գլխ. լիազոր գեն. Թամամշեանի կարգադրութեան համաձայն, փախստակ. ներկայ ամսւայ ուտելիքի ծախքերի համար [illegible] փոխադրուած է Երեւանի նահանգապետին 505,200 ռ., Գանձակի նահանգապետին—40,065 ռ., Ստաւրոպոլի(?) նահանգապետին—34,290 ռ., Թիֆլիսի նահանգ.—37,383 ռ., Թերգի(?) շրջանի կառավարչին—19,725 ռ., Բաթումի զինւորական նահանգապետին—65,676 ռ., Սեւ-ծովեան նահանգ.—11,016 ռ., Բայազետի շրջ. կառավարչին—35,022 ռ.

ԼՐԱՏՈՒ

ԹԻՖԼԻՍ

Անդրկովկասում զեմստւօ մտցնելու համար սկզբում որոշուած էր հրաւիրել միայն 87 անձ, բայց ի նը-

ԱՅԴ ԱՌԱՒՕՏ...

(Պատմւածք)

I

Այդ առաւօտ շուտ զարթնեցի ես. Մայիսեան թարմ, գեղածիծաղ մի առաւօտ, որ լի էր թռչունների դայլայլով եւ դաշտերից ու լեռներից եկող բուրմունքով.

Մօտ էր ձորագլուխը. Թումբերի միջի պատուածքն անցայ եւ կանգ առի գահաւանդի ծայրին.

Անմիջապէս ոտքերիս տակից իջնում էր խճալից լանջը, որ գնում էր հանգելու ձորակի խորքում հոսող վտակին.

Զմայլելի արօտներն ու մարգերն գեղածիծաղ՝ ողողւում էին ջրին. Թաւշեայ կանաչ գորգեր էին շողշողում տափաստանների վրայ եւ թաւալուն ժայռերի խառնուրդով մագլցում լեռների կուրծքն ի վեր. Անտառը ծաղկել էր համայնիչ գեղեցկութեամբ, մինչ կատարների վրայ փոքրիկ պէս ցանւած կային դեռ ձիւնի բարակ շերտեր.

Ջրի շշուկը հազիւ էր հասնում մինչեւ ինձ. Ամեն կողմից սակայն լսւում էին՝ «ծիւ—ծիւ», կաղ—կաղ»... այլեւ մանկային ճիչ ու կոչեր, որոնք դուրս էին նետւում այս ու այն ծործորից, այս ու այն բարձրութիւնից, ժայռերի միջից ու ապառաժների խառնուրդից. Զիլ ու ապառաժակոյտի անձաւներից կաչաղակների երամները դուրս էին նետւում դէպի ձորը՝ կանչիւններով. արածող նախիրների բառաչները արձագանք էին սփռում մացառների խորքերից, դիմացի գիւղակի աքաղաղները կանչում էին խուլ ձայներով եւ վերը, ժայռի մի կտորի վրայ ելած ինչ որ մանուկ, յամառ կերպով դէպի վեր էր նետում անորոշ աղաղակներ...

Որքան սքանչելի էր ապա ձորաճակատը, դիմացի այն ընդարձակ լանջը, որի վրայով, զանազան ուղղութեամբ, պարզւում էին ոլորապտոյտ շաւիղներ եւ գնում էին անհետանալու դէպի ամպամած կատարները.

Ինչպիսի զւարթութեամբ փայլում էին լայնածաւալ այն արօտավայրերը՝ պայծառ արեւի ճառագայթների տակ. Որքա՛ն գերհօրէն գունաւորւում էին լեռների կողերը, երբ երկնքի երեսից սահող ամպերը փոխնիփոխ ստւերում էին նրանց կնճիռները եւ կամ արեւի շողերը ոսկեգոյն փոշիով ողողում էին լերկ ապառաժները...

Ահա եւ մի խոշոր, լայնաթեւ թռչուն. Արծիւ անշուշտ, որ վեհափառօրէն սաւառնում էր ձորակն ի վեր, վայելչօրէն ծռւում, ի ցոյց էր հանում սեւաթոյր կոնակը, ապա երեւան էր բերում թեւերի ճերմակ աստառը, սպիտակահեր գլուխն էր ցնցում աջ ու ձախ եւ ծանրաշարժ ու վեհապանծ՝ հոլովւելու էր իջնում կարծես ձորակի ստւերների մէջ...

II

Նստել էի մի քարի վրայ, ամբողջովին խորասուզւել դիմացս պարզւող համայնապատկերի գեղեցկութեան մէջ եւ երկար ժամանակ անուշադիր մնացել՝ ինձնից քիչ դէպի վեր անցնող խճուղու կեանքին.

Թէեւ դեռ կանուխ էր, բայց արդէն ստւարանում էր դէպի քաղաք եկող գիւղացիների անցուդարձը. Տասնեակ ու ցախ բարձած էշերը խռնւում ու փոշի էին հանում, իսկ նրանց ետեւից տէրերը գնում էին համաչափ քայլերով ու բարձրաձայն՝ խօսակցում.

Նրանցից մէկի մեծ աղաղակն էր անշուշտ, որ սթափեցրեց ինձ.

Դարձայ. էշերից մէկը դէպի ձորն էր ծռւել. Տէրը նրա վրայ էր գոռում.

Դառնալիս սակայն՝ աչքս ընկաւ դէպի աջ, ձորափին կանգ առած մարդկանց մի խմբի.

Բոլորովին գահաւանդի եզրին եկած, խումբ կազմողները դէպի ձորն էին կռացել եւ աշխատում էին ինչ որ բան տեսնել նրա մի անկիւնում.

Կային նաեւ մանուկներ. Ապա՛ աւելացան անցորդ գիւղացիներից մի քանիսը.

Նայեցի եւ ես, սակայն անսովոր ոչինչ չգտայ. Ո՛չ ձորի խորքում, ոչ էլ ձորի այն կողմը, ուր անփոփոխ երեւում էր մացառոտ մի տափարակ նախ, իսկ աւելի վեր, ձորի կողերի վրայ՝ քաղաքի վերջին տնակները.

Աղքատիկ հիւղակներ էին. խարխուլ փոքրիկ շէնքեր, որոնց միակ առաւելութիւնը ձորի շքեղ տեսքն էր.

Հետաքրքրութիւնս զսպել չկարողացայ այլեւս, մանաւանդ որ խումբը չէր լուծւում, այլ աւելի էր ստւարանում.

Ելայ եւ մօտեցայ. Քաղաքացիներ էին կենտրոն կազմողները. Գիւղից եկողները մօտենում էին եւ մնում. Կազմւած շրջանի մէջ, երբ մի քանի քայլ առաջացայ, նկատեցի մի ծերունու լերկ գլուխը.

Ճանաչեցի. Դրացիս էր.

Կարճահասակ, կարմրաթուշ եւ գիրուկ, աշխոյժ մի ալեւոր, որ այդքան հասնելու համար գործ դրած ճիգերը սաստիկ քրտնել էր ու կարմրել, եւ այժմ, գլխարկը հանած զովանում էր ու միաժամանակ խօսում.

Արդեօք ինչ պիտի լինէր այն պատահարը, որ ստիպել էր Ասատ պապը (այդ էր ծերունու անունը) կիսատ թողնելու իր սովորական այցելութիւնը դէպի շուկան եւ մնալու մինչեւ գահաւանդի ծայրը.

Չէր համբերել. Հենց որ լսել էր դէպքը, բուռն փափագ էր զգացել՝ մէկ տեսնելու ձորի այն կողմը, որից ցած էր ընկել ու ջարդւել թշւառ Սմբատը.

— Ինչպէ՜ս, ասացի վախեցած. ուրեմն մարդ էր ցած ընկել այդ կողմից.

Ծերունին, որ ինձ տեսնելուն պէս նախ ձեռքն էր պարզել եւ ապա իր գալու պատճառը յայտնել—զարմացած գոչեց.

— Ի՛նչ է, չես իմացել դեռ. Ապա ինչու ես եկել այստեղ.

— Հենց այնպէս, ասացի ես. կամեցայ առաւօտ շուտով ձորի տեսքը վայելել.

— Հա՜... լաւ ես արել. Շատ սիրուն է մեր ձորը. Արժէ, որ ամեն առաւօտ մարդ այստեղ գայ. Բայց գէ, ես թէ ծերացել եմ եւ թէ շատ եմ տեսել... Վաթսո՜ւն տարի... Ամեն թուփ ու ժայռը գիտեմ...

Ու շարունակեց այնուհետեւ. Ըստ սովորութեանը շուկայ էր եկել կանուխ... Մարդ եթէ ուզում է լաւ պաշար ձեռք բերել, լաւ կրճուկ, խնձոր, լաւ պանիր, նոյնիսկ միս... անշուշտ պիտի արեւը չծագած շուկայ գայ...

Տեսայ որ հեռուից սկսեց ծերունին եւ հեռու էլ պիտի գնար—ընդհատեցի.

— Ո՞վ է ընկնողը. դարձայ դէպի միւս քաղաքացիները.

— Մի երիտասարդ է. բացատրեց մռայլ դէմքով ու գունատ, ըստ երեւոյթին՝ արհեստաւոր.

— Մեռե՞լ է.

— Անմիջապէս. ասաց երկրորդը.

Եւ մինչ մի երրորդը ուզում էր մանրամասնել պատահարի պարագաները, յանկարծ ձորագլխի այն կողմից, ուր խրճիթները կային, բարձր ու ժայռոտ տափարակից նետելով դէպի խորքերն ու մեզ տարածւեց ինչ որ մի խուլ ու երկարաձիգ, [illegible] աղաղակ, որ սարսուռի մէջ կարկամեցրեց ամենքիս ու սլացաւ գնաց հեռուները.

Սոսկումի ու պակուցման մի պահ յաջորդեց դրան. Բոլորիս հայեացքները սեւեռուած մնացին դէպի այն բարձունքները.

— Մայրն է...շշնջաց մէկը կողքիս. Ցեխոտ, չգիտեմ ով էր, ասաց խռպոտ շշուկով.

— Մեռնող-գնացողին ինչ, ապրողներին է ցաւը...

Ոչ ոք խօսք չգտաւ եւ լռութիւն յաջորդեց դրան. Ակնապիշ նայում էինք խրճիթների կողմը եւ շունչերնիս բռնած սպասում, թէ արդեօք նորից չէ՞ր հնչելու այն զարհուրելի ճիչը.

— Սխալմամբ է ընկել, թէ՞ դիտմամբ. խզեցի ես լռութիւնը՝ հարցնելով կամացուկ.

— Դիտմամբ... շնչաց նոյն գունատ արհեստաւորը. Ապա աւելացրեց.

— Ապրել չի կամեցել. կարճ եւ ազդու...

Եւ երբ մի վայրկեան լուռ էր մնացել ու պատասխան չէր ստացել ոչ ոքից, կարծես մէջը եղած գթանութիւնը աւելի խստացնելու համար՝ շշնջաց ուժգնութեամբ.

— Շատ էլ լաւ է արել... Արժէ՞ այսպէս ապրելը...

Ասատ պապը բուռն շարժումով դարձաւ դէպի նա, մի վայրկեան նայեց ու զննեց նրան եւ գրեթէ զայրոյթով էր, որ ճչաց.

— Որմն տեսէք մէկ է՜... Տօ, դու ինչ գիտես կեանքը. Ապրելը ոչ միայն շատ արժէ, այլ մարդ իր բոլոր ուժերը պիտի լարի հենց դրա համար. հասկանո՞ւմ ես... թէկուզ նեղութիւններով ու դառնութիւնով լի է կեանքը. բայց էլի արժէ ապրելը... Մի րոպէի կեանքի վայելքը՝ տասը տարւայ վշտերը մոռացնել է տալիս—գիտե՞ս դու այդ... Ա՜յ, նայիր մէկ... Չարժէ՞ միթէ ապրել՝ վայելելու համար այս արեւն ու օդը, այդ ձորի ու լեռների շքեղ տեսքը, այդ ծաղիկների անուշ բուրմունքը, զով քամին, երկնքի այն հմայիչ կապոյտութիւնը, ժայռերի—այդ հսկայ տեսարանը... Դու ինչ գիտես դեռ կեանքի արժէքը... Չգիտես, տղէ՛ս ես դու... Կարդա՛ կեանքը, սովորիր նրան եւ այն ժամանակ կը գնահատես...

Երիտասարդը գլուխը ցնցեց ու լուռ մնաց. Չէր համոզւել. Ծերունու ոգեւորութիւնը եւ կեանքի ներբողը չէր խօսել նրա սրտի հետ.

Գիւղացիները, որ ծերունուն ականջ էին դնում ուշադրութեամբ, նըշանակալից կերպով ինձ նայեցին.

— Երիտասարդ է դեռ, ասաց նրանցից մէկը լակոնաբար.

— Ի հարկէ որ երիտասարդ է, հաստատեց Ասատ պապը. չգիտէ դեռ կեանքը. Երիտասարդ հասակը չի ըմբռնում կեանքը, չգիտէ ուժն եւ նրա արժէքը, որ առանց դժւարութեան վճռում է բաժանւել նրանից, երբ փոքր ինչ երկար են տեւում դառնութիւնները.

Ծերունին երեւի մտադիր էր հիմա էլ այդ ուղղութեամբ խօսել, գովաբանել կեանքը, ոգեւորել իր իսկ խօսքերով...

Բայց չկարողացաւ. Ձորի կատարից դարձեալ հնչեց այն սոսկացուցիչ աղաղակը, որ մի վայրկեանի համար խլացնելու եկաւ թռչունների դայլայլը, ձորի խորքից բարձրացող ցնծագին գոչերը եւ բնութեան մէջ տարածւող կենսալից շշուկը.

Այնքան ազդեցիկ, այնքան զարհուրելի էր երկարաձիգ այդ ճիչը, որ վայրկենապէս շունչս բռնւեց.

Թւաց թէ գլուխս պտտում էր. Աչքերս մթագնեցին, ոտքերիս տակ երեւաց մի սեւ անդունդ՝ քարշող անհունութեամբ. եւ ես բնազդաբար կառչեցի առաջին հանդիպած մարդկային բազուկին՝ դէպի վար չգահավիժելու համար...

Վ. Փափազեան

(Վերջը միւս անգամ)

կատի ունենալով հասարակութեան անչափ հետաքրքրութիւնը գեմստւօ մտցնելու մասին, իշխանութիւնը դրան աւելացնում է էլի 50 հոգի, այդպիսով ուրեմն Անդրկովկասում գեմստւօ մտցնելու հարցը կը քննէ 137 ժողովրդական ներկայացուցիչների ներկայութեամբ։

◆ Այսօր երեկոյեան ժամը 8-ին Աշխարհագրական Ընկերութեան դահլիճում (Московская, 3) տեղի կունենայ Մոսկւայի Կայսերական Հնագիտական ընկ. Կովկասեան բաժանմունքի անդամների ժողովը, որի մէջ կը լսւի Լ. Մ. Մելիքսէթ-Բէկի զեկուցումը հետեւեալ նիւթի մասին. «Грузинская версія сказанія о постѣ араджаворъ въ связи съ вопросомъ о принадлежности армянъ къ монофизитскому толку». Ժողովը ժողովրդական է։

◆ Մերձծովեան շրջանի գնդի կառավարիչ Լ.-ը խնդրել է Քաղաքների Միութեան Կովկասեան բաժանմունքի կոմիտէին, որ սա կազմակերպի և Տրապիզոն ուղարկի 60 սայլից բաղկացած մի խումբ, քաղաքը մաքրելու և աղբ ու աւելցուքը թափելու համար։ Բացի այդ գնդապետը խնդրել է նաև, որ անյապաղ կազմակերպուեն բաղնիքներ։

◆ Կիրակի, ապրիլի 24-ին, առաւօտեան ժամը 11-ին, Զուբալովի անուան ժողովրդական տանը տեղի կունենայ Ի. Ա. Ակունովի ռուսերէն լեզուով դասախօսութիւնը հետեւեալ նիւթի մասին. «Ժողովրդական դպրոցների մասին»։ Տեղերի գները 5 և 10 կ.։

◆ Քաղաքների Միութեան գլխաւոր լիազօր Մ. Վ. Չելնոկովը հաղորդել է Քաղաք. Միութեան Կովկասեան կոմիտէին, որ իր տրամադրութեան տակ, զինուորներին նուէրներ գնելու համար, կայ 30,000 ռ.։ Նա խնդրում է, որ կոմիտէն 6,000 ռ. կօշիկներ գնէ, 6,000 ռ. ճերմակեղէններ, իսկ մնացեալ 18,000 ռ. գնեն թէյ, շաքար, կոնֆետ, թութուն, լուցկի, օճառ և զինուորների համար ուրիշ հարկաւոր իրեր։

◆ Հայ Գրողների երեկոյթը, որ տեղի պիտի ունենար այսօր, ապրիլի 23-ին, մի քանի դասախօսների դեռ քաղաքս չգալու պատճառով յետաձգւում է առաջիկայ հինգշաբթի, ապրիլի 28-ին։

◆ Զինուորական իշխանութեան կարգադրութեան համաձայն, Թիֆլիսի քաղաք. վարչութիւնը Տրապիզոնի ազգաբնակչութեան կարիքների համար ուղարկել է 5 վ. ալիւր։

◆ Ստացանք «Նուէր Մանուկներին» ընկերութեան 1914—5 թ. թ. գործունէութեան հաշիւը, որից երեւում է, թէ ընկ. 1914 թւի ընթացքում բաժանորդներից, անդամներից և այլ եկամուտներից ունեցել է մուտք՝ 3381 ռուբլի 74 կոպէկ, ելք՝ «Հասկերի» հրատ. և այլ մանր ու մունր ծախքերի համար 3279 ռ. 80 կ., իսկ 1916 թ. մուտքը եղել է 2112 ռ. 91 կ., ելքը՝ 1588 ռ. 84 կ.։ Մնացորդ առ 1-ն յուն. 1016 թ. 524 ռ. 7 կ.։

◆ Ապրիլի 22-ին Թիֆլիսի բարակներն են մտել՝ սկարլատինայով—1, դիֆտերիտով—3, բծաւոր տիֆով—2, որովայնային տիֆով—1. առողջացել են՝ սկարլատինայով—4, բծաւոր տիֆով—3, որովայնային տիֆով—2. մեռել է բծաւոր տիֆից 1. մնում են՝ սկարլատինայով—124, դիֆտերիտով—14, բծաւոր տիֆով—87, որովայնային տիֆով—27, կրկնւող տիֆով—56, դիզինտերիայով—1, մենինգիտով 1, խառն 1։

ԴՊՐՈՑԱԿԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՈՀԵՐ

IV

Իսկ ուսուցիչների անծանօթութիւնը վարչական կարգերին, նրանց հասարակական կեանքի մէջ մտնելու և ժողովրդի հետ շփւելու անփորձութիւնը, նրանց աշակերտի հոգեբանութիւնն ըմբռնելու անընդունակութիւնը, նրանց դասաւանդման ու դաստիարակութեան եղանակի բացասական կողմերը...

Շատ են դրանք, անթիւ—և մէկ մէկ թւել, մէկ մէկ բացատրել այդ թերութիւնները՝ շատ երկար կը լինէր։

Սակայն դրանք բոլորն էլ ապացոյցներ են, որ մենք դպրոցական գործը ոչ թէ զարգացնում ենք, այլ մեռցնում ենք։

Դրանք ապացոյցներ են, որ դպրոցը բաց են անում—յարմարւելով բոլոր թերութիւնների հետ—ցոյց տալու համար դպրոցների շատ թիւ և առանց ի կշիռ անելու, թէ լաւ է հինգի տեղ մէկն ունենալ, կարգին, կանոնաւոր դպրոց ունենալ, քան հինգն ունենալ և... ոչինչ չունենալ։

Ո՞վ է մեղաւոր այդ անկանոն, այդ անկերպարան դրութեան... Թողնենք առ այժմ այդ խնդիրը։

Պատճառներ կան, սակայն, որոնք մի կողմից էլ իրենք են նպաստում դրութիւնն այսպէս քաօսային, այսպէս կազմալուծ դարձնելուն։

Դրանցից ամենաառաջինն անտարակոյս ուսուցիչների յաճախակի փոփոխութիւնն է մի դպրոցից միւսը, որ այնքան տարբերային երևոյթների բնաւորութիւն է կրում մեզանում։

Մէկ էլ տեսնում էք ուսուցչին դուր չեկաւ հոգաբարձուի վարմունքը, կամ հոգաբարձուն լաքէական ծառայութիւն չտեսաւ ուսուցչից, կամ ռոճիկը կտրեցին, կամ պայմանների մէջ չհամաձայնեցին—և նա ստիպւած եղաւ տարւայ վերջում թողնել դպրոցը։

Այս աւելի մեծ չարիք է դպրոցի համար, քան անկիրթ ու թերուս ուսուցիչ տալն աշակերտին։

Չենք կարծում, թէ որևէ լուսաւոր երկրում, որևէ քաղաքակիրթ ազգի մէջ, նոյնիսկ Ռուսաստանի պետական-տարրական, զեմստւային և այլ դպրոցներում նման երևոյթ տեղի ունենայ, կամ բացառիկ հանգամանքներում նա այնքան վարակիչ լինի, որքան մեզանում։

Մեր գիւղական դպրոցների իննսուն տոկոսը ենթակայ է այդ վարակումին։

Չէք տեսնի, որ մի ուսուցիչ մի դպրոցում մի հինգ տարի շարունակ պաշտօն վարէ. այլ միշտ մի, երկու և առաւելն երեք տարի։ Եւ հազիւ թէ պատահի, որ մի աշակերտ մի առարկայից մի դպրոցական շրջան անցկացնի մի ուսուցչի ձեռքի տակ, նրա, այսպէս ասած, չկոլոլւում մնում ու նրա տւած պաշարով—լաւ թէ վատ—դուրս գայ կեանքի ասպարէզ։ Այլ միշտ մէկի դրած հիմքը միւսը գալիս է քանդում, կամ միւսի լաւ պատւաստը առողջ արմատ չունենալով՝ չի աճում ու չի զարգանում արժանաւորապէս։

Այս բանը խիստ աչքի է ընկնում մանաւանդ մեր թեմական դպրոցներում, ուր աշակերտի ուսումնական շրջանը մի քանի տարի է տեւում և նա հարկադրւած է լինում մի առարկայի մէջ երկու-երեք ուսուցիչ փոխել։

Այդ էլ նրանից է, որ խիստ կերպով բացակայում է դպրոցներից ծրագրի միատեսակութիւնը։ Շատ ուսուցիչ իր ծրագիրն ունի, իր սիրած հեղինակի դասագիրքը։ Եւ երբ մտնում է մի դպրոց, շատ անգամ աշխատում է աշակերտի անցածի վրայ խաչ դնել և իր ծրագիրն ու դասագիրքը հրապարակ բերել։

Ի՞նչ անի այդտեղ աշակերտը, ինչպէս հաշտեցնի իր մտքի հետ այդ երկու ծայրերը։ Եւ ինչպէս մեղադրել նրան, թէ մնում է թերուս, համբակ։

Եւ այսպէս առաջ անմշակ է մնում տարրական կրթութիւնն աշակերտի մէջ և անպատրաստ ու անկազմակերպ ինքն աշակերտը իր գիտութեան պաշարով։ Ինքնուրոյնութիւնից զուրկ՝ ըմբռնելու մէկի լաւ կամ միւսի վատ ուսուցման ու դաստիարակութեան արժէքը, աշակերտն այդպէս էլ թերի, այդպէս էլ անպատրաստ մղւում է կեանքի ասպարէզ և մնում թերատ ամեն ինչի մէջ։

Ահա որն է մեծ չարիքը։

Հազւագիւտ երեւոյթ կը լինի, եթէ դուք հանդիպէք որևէ դպրոցում մի ուսուցչի, որ շարունակ 15—20 տարի այդտեղ ուսուցչութիւն անելիս լինի։ Ընդմիջումներ դարձեալ կը գտնէք։—Մի երկու տարի անպայման հեռացած, ուրիշ դպրոց գնացած և դարձեալ եկած։

Տարբերութիւնն այնու ամենայնիւ անվիճելի ահագին է։ Շօշափելի առաջադիմութիւն, արգասիք կը տեսնէք դուք աշակերտի մէջ, եթէ նա իր ամբողջ դպրոցական շրջանն անց է կացրել մի ուսուցչի ձեռքի տակ, եթէ մանաւանդ ուսուցիչը բարեխիղճ է եղել, ընդունակ և մի բան սովորեցրել է իր աշակերտներին։

Միսաար

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆՆՊԱՍՏ ՆՊԱՍՏՆԵՐ

—

Վարանդա, 18 ապրիլի

Էջմիածնի պաշտօնական օրգան «Արարատը» իր անցեալ 1915 թւի նոյեմբեր-դեկտեմբեր համարում հաղորդում է, որ ազգիս Վեհափառ Հայրապետը Ղարաբաղի թեմի կառավարիչ Զաւէն վարդապետի նոյն թւի սեպտ. 1-ի № 1049 միջնորդութեան համաձայն՝ հրամայել է Սինոդին տալ դպրոցական ֆոնդի գումարից տարբեր դպրոցական նպաստ 1,600 ռ. հետեւեալ գիւղերի նիւթապէս կարօտ դպրոցներին. Բեանդակ և Զուլու-Սուլթան-Նուխի, Միրզաբէկլու գիւղերին 200-ական ռ., Սէյդիշէն, Խանապատ, Վերին-Ազնէք և Ներքին-Ազնէք գիւղերին 100-ակ. ռ., Խանբենդ-ասան, Ղշլաղ, Նորագիւղ, Հարաւ, Քառասնի, Ղաւախան, Հացի, Սոս, Քերթ, Տողատեղ, Թաղասեռ և Մոխրաթաղ գիւղերին 50-ակ. ռուբլի։

Գոհութեամբ սրտի պէտք է յայտնենք, որ դպրոցական ֆոնդը շատ յարմար առիթին և ժամանակին է օգնութեան գալիս մեր աղքատ դպրոցներին, որոնք մանաւանդ ներկայ համատարած աղէտի ժամանակ չեն կարողանում պահպանել իրենց գոյութիւնը։ Սակայն ցաւօք սրտի պէտք է ասենք, որ նպաստներից ոչ մէկը և ոչ մի գիւղական դպրոցի, գոնէ մեր գաւառում, չի հասել, որի պատճառով և դպրոցներից շատերը, օրինակ՝ Սէյդիշէն, Խանապատ, Ղշլաղ, Նորագիւղ, Սոս և Տողատեղ գիւղերի դպրոցները հարկադրւած են եղել դադարեցնելու իրենց գոյութիւնը և փակւելու։ Գուցէ փակւեն և միւս դպրոցները, եթէ տակաւին նպաստները կը մնան անյայտ ու անյատակ անկիւններում ընկած և լոյս չեն տեսնի իրենց նպատակներին ծառայելու։ Մենք չգիտենք, թէ որտեղ է գտնւում այժմ Էջմիածնի դպրոցական ֆոնդից բաց թողած գումարը, բայց աւելի քան համոզւած ենք, որ Էջմիածնի պաշտօնական օրգանը սխալ տեղեկութիւն չէր հրատարակի, ուրեմն և 1,600 ռ. մինչև այսօր Էջմիածնում չէր մնայ։

Նոյնպէս մութ դրութեան մէջ է գտնւում և երկու-երեք տարի սրանից առաջ Անդրկասպեան երկրում Բիւզանդ վարդապետի և Մեսրոպ քահանայի դպրոցական նպատակով կատարած հանգանակութեան խնդիրը, որն ինչպէս հաստատում են, 3,000 ռ. չափ արդիւնք է տւել և դրամը նոյն հոգեւորականների ձեռքով յանձնւել Շուշւայ թեմական իշխանութեան. բայց թէ ինչ է արւել, ինչպէս է գործադրւել և ո՞ր դպրոցին յատկացւել՝ մնում է անյայտ։ Այդ մասին նոյնիսկ Աշան գիւղից մի թղթակցութիւն կայ «Հորիզոնի» 1915 թ. 243-ում, Զաւէն վարդապետին ուղղած մի հարց, որը մինչև այսօր մնաց անպատասխան և չլուսաբանւած մամուլի մէջ։

Ժամանակ չէ՞, որ Էջմիածինը հասկանայ, թէ ինչ մարդիկ է կարգում հասարակական գործերի գլուխ։

Վարանդեցի

ԳԻՒՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՂՇԼԱՂ (Փամբակի շրջան).— Ամսիս 17-ին կայացաւ գիւղիս ծխականների ընդհանուր ժողովը։ Հոգաբարձական խորհրդի կողմից աւ.-ուսուցիչը կարդում է դպրոցական 1913—1916 եռամեակի տեղեկագիրը, որից երևում է, որ դպրոցն առ 1-ն սեպտ. 1916 թ. ունի մուտք 8,028 ռ. 40 կ., նոյնքան էլ ելք։ Դպրոցն ազատել է ծանր պարտքերից։ Այնուհետև ժողովն անցնում է հոգաբարձական նոր կազմի ընտրութեան։ Վերջը ժողովն առաջարկեց դպրոցի եկամուտներն աւելի հաստատ դարձնելու համար գործադրել հետեւեալ որոշումները. 1) շինել գիւղի հրապարակում կշեռք (ղանթար) և արդիւնքը յատկացնել դպրոցի օգտին. 2) հասարակական խոտատեղերը հանել աճուրդի դարձեալ դպրոցի օգտին. 3) Հաս. համախօսականի զօրութեամբ առանձին տուրք նշանակել գիւղիս սահմանում պահւող անասունների և փեթակների վրայ և արդիւնքը յատկացնել նոյն նպատակին. 4) Տարւայ ընթացքում անասունների վրայ դրած տուգանքից կազմւած գումարը նմանապէս տալ դպրոցին և այլն։

Հ. Մնացականեան

ՍՈՒՐԱՄ.—Այստեղ հողին յանձնւեց զինուորական պատւով Տրապիզոնի մօտերքում հերոսաբար ընկած պրապորշչիկ Գարեգին Զանիբախչեանի դին։

— Եղանակները գարնանային են. պտղատու ծառերը ծաղկել են, բերքը բաւական յաջող է երևում. եթէ բնութեան արհաւիրքները չվնասեն, որոշ չափով ազատ շունչ կը քաշեն Սուրամի և շրջակայքի բնակիչները, որոնք տառապում են անհրաժեշտ մթերքների անասելի գների ծանրութեան տակ. օրինակ ձւի հատը դառել է 5 կոպէկ, մսի ֆունտը 35 կոպէկ, հացը՝ 8 կոպէկ, եգիպտացորենի փութը՝ 2 ռ. 10 կոպէկ, ցորենի փութը՝ 2 ռ. 80 կ. և այլն։

— Նորոգ հանգուցեալ Բաբաջան Բունունսուզեանի փեսաները պսակի և հոգեհացի փոխարէն տեղիս դպրոցին նուիրեցին 60 ռուբլի։

Յովհ. Դ...եանց

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

„Рѣчь"-ին Լոզանից հաղորդում են, որ Կահիրէից ստացւած մի հեռագրի համաձայն գերմանական սպաները Թիւրքիայում ամրացրել են Կոնիա—Անգորա գիծը։ Բոլոր հնարաւոր օժանդակ ուժերն ուղղւած են դէպի այդ երկու կէտերը։

— Գերմանացիները Հայաստանում թիւրքերի կրած պարտութիւնը վերագրում են այն բանին, որ թիւրք սպաները չեն կատարել գերմանական հրահանգները։ Սուլթանը կամեցել էր անատոլիական բանակը յանձնել Էնւէր-փաշայի հրամանատարութեանը, բայց այդ բանին հակառակել էին աւստրո-գերմանացիները, անհրաժեշտ համարելով Էնւէրի ներկայութիւնը Պոլսում իրենց ապահովութեան համար, որովհետև այնտեղ նրանց լուրջ վտանգ էր սպառնում դժգոհ թիւրք ամբոխի կողմից։

— Էնւէր-փաշայի վերջին ուղևորութեան նպատակն էր նախապատրաստել Սիրիայի ծովեզերքի պաշտպանութիւնը ամէն տեսակ պատահականութիւնների և դաշնակիցների դեսանտի դէմ։ Բացի սրանից, նա նպատակ ունէր արաբներից օգնութիւն խնդրելու կայսրութեան թշնամու դէմ։ Ալեքսանդրիայից ստացւած տեղեկութիւնների համաձայն՝ արաբ հասարակութիւնը բաւական սառն ընդունելութիւն է ցոյց տւել Էնւէրին։

— Սևաստապոլում ստացւած տեղեկութիւնների համաձայն, ծովամերձ շրջանում ապրող բնակչութիւնը խիստ հանգիստ կերպով է վերաբերւում ռուսական գրաւումին։ Տրապիզոնում կեանքը սովորական ընթացքն է ստացել. բոլոր խանութները բաց են, թիւրքական բանակի նահանջից յետոյ փախած խուլամ բնակչութիւնը կամաց-կամաց վերադառնում է։

— Ֆրանսիական մամուլը գերմանական յարձակումը Վերդենի դէմ վերջացած է համարում։ Նըկատւած է, որ գերմանացիները տանում են ծանր թնդանօթները։ Զանազան ենթադրութիւններ են լինում, թէ գերմանացիներն այժմ որտեղ են պատրաստւում յարձակում գործելու։ Ոմանք ասում են, թէ Ֆլանդրիայում, ուր սկսել է կենդանութիւն նկատւել, և ոմանք, թէ՝ Սալոնիկում։

— „Нов. Вр."-ին Բուխարեստից հեռագրում են, որ իտալական գործակալութեան տեղեկութիւնների համաձայն Լիբկնեխտի վերջին անգամ ռայխստագում հանդէս եկած ժամանակ՝ մի ահագին ամբոխ մօտեցել էր ռայխստագի շէնքին, որ ներս մտնի և ցոյց կազմակերպի հաշտութեան օգտին։ Ցուցարարների ճառախօսները մտադիր էին հրդեհել ռայխստագի շէնքը։ Իշխանութիւնը, որին յայտնի էր ամբոխի մտադրութիւնը, թոյլ չէր տւել նրան մօտենալ շէնքին։ Տեղի էր ունեցել մի արիւնահեղ ընդհարում կանչւած զօրքերի հետ, որը կրակ էր բացել ամբոխի վրայ։ Հետեւանքն է՝ աւելի քան 200 հոգի սպանւած և բազմաթիւ վիրաւորներ։

— Ինչպէս հաղորդում են Վաշինգտոնից, հիւսիս-ամերիկեան ֆինանսական շրջաններում հաւատում են, որ Միացեալ-Նահանգների և Գերմանիայի միջև դիւանագիտական յարաբերութիւնների խզում չի լինիլ, որովհետև Գերմանիան կը զիջի։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԿՈՉ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆ

—

Հայրենակիցներ!

Նկարագրել պատերազմականութեան կրած անհուն վիշտն ու տառապանքը՝ այդ կը լինէր կրկնութիւն այն բոլորի, որի մասին շարունակ խօսում է հայ մամուլը։

Ցեղեցնել, որ զրկւած աւեր Հայաստան վերադարձող ընչազուրկ փախստականին միջոցներ են պէտք վերապրելու և իր օճախը շինելու համար։ Բայց չէ՞ որ դա չափազանց հասկանալի պիտի լինէր։

Մեր ջիղերը վաղուց են բթացել այս անհուն տառապանքի առաջ։ Մենք ցանկանում ենք միայն ասել ձեզ, մեր յարգելի հայրենակիցներ, որ հայկական այս երկունքի ծանր ու պատմական օրերին չենք կամենում, որ պարսկահայ կինը իր մասնակցութիւնը չունենայ ընդհանուր գործի մէջ, որ մենք եւս գէթ նուազագոյն չափով օգնութեան հասնենք աղաղակող կարիքին։

Այդ պարտականութեան գիտակցութեամբ է, որ կրկին կոչ է անում ձեզ Թաւրիզի Հայուհեաց Բարեգ. Միաց. Ընկերութիւնը, որ իր 25 տարւայ կեանքով ծանօթ է արդէն, բայց որ դժբախտաբար քաղաքական և այլ հանգամանքների պատճառով, վերջին տարիներում անգործութեան էր դատապարտւել։

Ընկերութեանս նորընտիր վարչութիւնը, գեր. սրբազան Մելիք-Թանգեան եպիսկոպոսի առաջարկութեամբ, իր վրայ է վերցրել Աղբակի վերաշինութեան գործը։ Այդ պարտականութիւնը ստանձնել ենք լի հաւատով դէպի մեր բարեբար հայրենակիցները, որ իրենց նիւթական օժանդակութեամբ կը խրախուսեն մեր գործունէութիւնը։

Կոչ ենք անում ձեզ, պարսկահայ հայրենակիցներ, որտեղ էլ դուք լինիք, այստեղ, Ատրպատականում թէ Ռուսաստանի բազմազան վայրերում, թէ Արտասահմանում։ Դիմում ենք ձեզ մեծ հաւատով, դիմում ենք անհուն վստահութեամբ դէպի ձեր ազնիւ հոգին, խնդրելով, որ օր առաջ ձեր կամաւոր նուէրներով հնարաւորութիւն տաք մեզ՝ տառապանքի այս հսկայ ծովի մէջ գէթ մի փոքրիկ անկիւնի արցունքը սրբելու...

Խնդրում ենք նուէրները ուղարկել Թաւրիզ վարչութեան անդամուհիներից որևէ մէկի անուն-ազգանունով։

Նախագահ՝ Մ. Նազարբէկեան
Փոխ-Նախագահ՝ Հեղ. Ժորժ
Գանձապահ՝ Գևորգիս Սարաճեան
Քարտուղար՝ Աշխէն Գ. Սաճակեան
Անդամուհիներ՝ Մարիամ Շահբազեան, Հռիփսիմէ Աւագեան

Ց. Գ. Հայ միւս թերթերին խնդրում ենք արտատպել։

Խմբագիր՝ Ս. ՍԱՀԱԿԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Հայ Օրիորդների Կոմիտէն շնորհակալութեամբ ստացաւ հետեւեալ նուէրները՝ Շուլաւէրի օրիորդներից—108 ռ. 74 կ., մի ումից 25 ռ., Գրիգոր Ռեւազեանից 50 ռ., «Դուզատել» ընկ. 25 ռ., Միրզոյեանից 2 ռ. 50 կ., Վ. և Ստ. Սմբատեանների աշակերտներից 6 ռ. 50 կ., Գուդաուտից պ. Եղիա Եղիսերեանի միջոցով 119 ռ., նուիրատուներն են՝ Աշրաֆեան Գ., Եղիսերեան Բ. 10-ակ. ռ., Միսակ Գալիքեան 8 ռուբ., Գրիգոր և ընկ.-նից, Յովհաննէս Կիւրճեան, Փիլոս Կաղանճեան, Եղբ. Եաղիճեաններ, Գօգոս Մինասեան 5-ական ռուբ., Եղբ. Տատուրեաններ, Յարութիւն Ակուլեան 4-ական ռուբլի, Գօգոս Կաթոլեան, Գօգոս Շամլեան, Զաքար Գեւրկեան, Վարդ. Էլմասեան, Սարգիս Վարդապետեան, Պետրոս Գարագաշեան, Կաւ. Գարից օղլի 3-ակ. ռուբ., Սերգէյ Յակոբեան, Մկրտիչ Արէգեան, Գօգոս Աշրաֆեան, Գօգոս Քերոբեան, Մարտիրոս Ոսկերչեան, Յակոբ Տարմանեան, Տիգրան Սիմոնեան, Եղբ. Յովհաննիսեան 2-ական ռուբ., Գրիգոր Եամանեան 1 ռ. 50 կ., Սեդրակ Բաղալեան, Թորոսի Դաւիթ, Աբրահամ Յակոբեան, Գրիգոր Տէր-Ղազարեան, Արշակ Մխիթարեան, Եղիշէ Սարգսեան, Սարգիս Էփրեմեան, Տիգրան Աւետեան, Յովհաննէս Եագուպեան, Օվ. Եփրեմեան, Արամ Աղեկեան, Սափրիչեան 1-ական ռուբ., Հրանդ Թ. 5 ռ. 50 կ., Մելքոն Յովհաննիսեան, Տիգրան Գրիգորեան, Մուշեղ Նահապետեան, Յովհաննէս Կիրակոսեան 50-ական կոպ.։

479 1—1

Հրատարակութիւն «Նոր» Ընկ.
Дозв. воен. ценз.
Типографія „МАМУЛЪ", Лорисъ-Меликовская ул. № 22.